2019, ՀՈՒՆՎԱՐ Բ, ԹԻՎ 2 (526)

Էջմիածնի Տպագիր

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Բանակի օրվա առիթով հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Հայոց բանակի քաջարի սպաներին ու զինվորներին եւ համայն մեր ժողովրդին:

Այս տոնական օրը մեր հոգիները լցվում են հպարտության զգացումով, քանզի մեր հաղթական բանակը արի ոգով պաշտպանում է մեր հայրենիքի սահմանները՝ իր մշտարթուն ու խիզախ ծառայությամբ մեր կյանքում բերելով օրինակը հայրենասիրության ու պատասխանատվության:

Մենք հավատում ենք, որ Հայոց բանակի տոնը փառապանծ ու հերոսական հիշատակներով մեր ժողովրդի յուրաքանչյուր զավակի պիտի զորացնի իր պարտքի մեջ հայրենիքի հանդեպ: Բանակի տոնը պատգամ է մեր ժողովրդին տոգորվելու հաղթանակների վստահությամբ, ջանք ու ավանդ բերելու Հայաստանի ու Արցախի շենացմանն ու զարգացմանը եւ իրագործելու առաջընթացի ու ազգային զարթոնքի մեր տեսիլքները: Մեր հայրենաշեն գործերը պիտի պանծացնեն նաեւ հիշատակը իրենց կյանքը հայրենիքին զոհած հերոսների:

Աստվածակառույց Մայր տաճարի Սուրբ Սեղանի առջեւ Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ ամենախնամ Տերը Իր շնորհների եւ օրհնության ներքո պահպանի մեր բանակի սպաներին ու մարտիկներին՝ զորացնելով ամուր հավատքով, ուժ ու կորով պարգեւելով իրենց պանծալի ծառայության մեջ եւ նպատակների իրագործում ու երջանկություն՝ իրենց կյանքում:

Թող Տիրոջ խաղաղությունը հաստատվի աշխարհում, խաղաղ ու ապահով շենանան եւ զորանան հայրենի մեր երկիրը եւ աշխարհասփյուռ մեր ժողովուրդը:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

17 հունվարի **Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի մշտական համակարգող Շոմբի Շարփին՝ ուղեկցությամբ ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունների եւ ծրագրերի պատասխանատուների: Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն, ԵՀԽ-ի հայաստանյան «Կլոր սեղան» միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Մուշեղ եպս Բաբայանը եւ «Կլոր սեղան» հիմնադրամի տնօրեն Կարեն Նազարյանը:

Հանդիպման սկզբում տիար Կարեն Նազարյանը Նորին Սրբությանը ներկայացրեց պրն Շարփի գլխավորած պատվիրակությանը՝ մասնավոր անդրադարձ կատարելով Հայաստանում ՄԱԿ-ի գրասենյակի համագործակցությանը Մայր Աթոռի կառույցների եւ «Կլոր սեղան» հիմնադրամի հետ եւ դրա հեռանկարներին:

Մայր Աթոռում այս հանդիպման առիթով իր ուրախությունը հայտնեց նաեւ Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողը: Վերջինս Ամենայն Հայոց Հայրապետին ներկայացրեց Հայաստանում ՄԱԿ-ի գրասենյակի կողմից ծավալվող գործունեությունը տարբեր ոլորտներում՝ ուղղված արժանապատիվ կյանքի պայմանների ստեղծմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը, երկրի առջեւ ծառացած խնդիրների հաղթահարմանը: Ընդգծելով ՄԱԿ-ի գրասենյակի եւ Հայոց Եկեղեցու առաքելության ընդհանրությունը մի շարք ոլորտներում՝ պրն Շոմբի Շարփը շնորհակալություն հայտնեց ՄԱԿ-ի գործակալությունների եւ եկեղեցական կառույցների միջեւ ձեւավորված գործակցության առիթով՝ պատրաստակամություն հայտնելով էլ ավելի ընդարձակելու այն: ՄԱԿ-ի մշտական համակարգողը փոխանցեց Վեհափառ Հայրապետին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարության երախտագիտությունը Հայոց Եկեղեցու՝ միջկրոնական երկխոսության մեջ հետեւողական ներգրավվածության եւ տարածաշրջանում խաղաղության վերականգնմանն ի նպաստ ծրագրերի իրականացման կապակցությամբ:

Այնուհետեւ ներկաներին իր օրհնությունը բերեց Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Կաթողիկոսը՝ գնահատելով Հայաստանում ՄԱԿ-ի գրասենյակի լայնածավալ գործունեությանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ արձանագրեց ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունների, հիմնադրամների եւ ծրագրերի արդյունավետ համագործակցությունը Մայր Աթոռի կառույցների, թեմերի եւ «Կլոր սեղան» հիմնադրամի հետ:

Նորին Սրբությունը հյուրերին հանգամանորեն ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարբեր կառույցների գործունեությունը մասնավորապես կրթադաստիարակչական եւ սոցիալական ոլորտներում՝ տեղեկացնելով առաջիկա ծրագրերի մասին: Վեհափառ Հայրապետը հայտնեց, որ 2019 թվականին, Ընտանիքի տարվա շրջանակներում, Մայր Աթոռի եւ թեմերի կողմից կազմակերպվելու են հասարակության մեջ ընտանեկան արժեքների ամրապնդմանն ուղղված միջոցառումներ, իրականացվելու են նաեւ աջակցության զանազան ծրագրեր:

Զրույցի ընթացքում խոսվեց առկա գործակցության ընդլայնման հնարավորությունների մասին:

Վերջում Վեհափառ Հայրապետը ՄԱԿ-ի գրասենյակի պատասխանատուին եւ ներկայացուցիչներին մաղթեց արգասավոր գործունեություն:

25 հունվարի **ՀՀ Ազգային ժողովի նախագահին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նորընտիր նախագահ Արարատ Միրզոյանին:

Շնորհավորելով պրն Միրզոյանին ՀՀ Ազգային ժողովի նախագահ ընտրվելու առիթով՝ Նորին Սրբությունը մաղթեց, որ նրա պաշտոնավարումը նշանավորվի բարի արդյունքներով՝ երկրի բարօր ու օրհնյալ կյանքի համար:

Վեհափառ Հայրապետը, խոսելով պետական, ազգային եւ հասարակական կյանքում Ազգային ժողովի կարեւոր դերակատարության մասին, մասնավորապես շեշտեց օրենսդրական կարգավորումներով հայրենի երկրի առջեւ ծառացած խնդիրների լուծման եւ առաջընթացի ապահովման, ինչպես նաեւ միջխորհրդարանական կապերի եւ խորհրդարանական դիվանագիտության խթանման անհրաժեշտությունը: Նորին Սրբությունը հավելեց, որ օրենքները պետք է ստեղծվեն սիրով եւ ծառայեն բարուն՝ նպաստելով պետության զորացմանն ու զարգացմանը, ժողովրդի կյանքում բարիքի առատացմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ Ազգային ժողովի պատգամավորների կրթադաստիարակչական առաքելությանը, քաղաքական բանավեճերը եւ քննարկումները փոխադարձ հարգանքի եւ հանդուրժողականության մթնոլորտում վարելու կարեւորությանը, ինչը նաեւ դաստիարակչական նշանակություն պիտի ունենա եւ բարի օրինակ լինի աճող սերնդի համար:

Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձ կատարեց նաեւ Մայր Աթոռի եւ ՀՀ Ազգային ժողովի միջեւ ձեւավորված համագործակցությանը՝ նշելով, որ Եկեղեցու առաքելությունը ծառայությունն է ժողովրդին: Այս իմաստով Նորին Սրբությունը հաստատեց, որ ինչպես անցյալում, այնպես եւ այսօր Հայոց Եկեղեցին շարունակելու է իր օգտակարությունը բերել օրենսդիր մարմնին՝ ազգային, կրոնական, հասարակական խնդիրներին վերաբերող հարցերում, նպաստել Հայաստանի եւ Սփյուռքի ներուժի համախմբմանը՝ հանուն հայրենիքի պայծառության, խաղաղ ու ապահով կյանքի:

Շարունակությունը՝ էջ 2

Բանակի օրվա առիթով Պատարագ եւ դարգեւաբաշխություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Հունվարի 27-ին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ս. Վարդան եւ Ս. Հովհաննես մատուռ-մկրտարանում Հայոց բանակի օրվա կապակցությամբ մատուցվեց ս. Պատարագ: Պատարագիչն էր ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը, ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ, գեներալ-լեյտենանտ Արտակ Դավթյանը, Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ ԶՈՒ բարձրագույն սպայական կազմի ներկայացուցիչներ, ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության գնդերեցներ:

Ս. Պատարագի ընթացքում Վրթանես սրբազանն անդրադարձավ օրվա խորհրդին՝ ի մասնավորի նշելով, որ հայ քրիստոնյան թե՛ հոգեւոր, թե՛ առօրյա կյանքում եւ թե՛ ծառայության մեջ մշտապես պետք է լինի արթուն, որովհետեւ զգոնությունը թուլացնելու, թմրեցնելու ու ննջեցնելու իրավունք չունի, այլապես անխուսափելի կորուստներ կունենա: *«Սակայն ինչպես որ չարը՝ սատանան է փորձում քրիստոնյա մարդու զգոնությունը թուլացնել, ուշադրությունը շեղել՝ փրկության գերխնդրից շեղելու համար, այդպես էլ մեր մարմնավոր թշնամին է փորձում մեր ընդհանուր, այդ թվում՝ բանակի ուշադրությունը շեղել եւ մեր արթնությունը չեզոքացնել զանազան ճանապարհներով ու ստոր միջոցներով: Հետեւաբար այս կոչն արդիական է բազմապատիկ չափով եւ միշտ հնչում է այսպես. «Արթո՛ւն կացեք եւ պատրաստ եղեք, որովհետեւ չգիտեք, թե թշնամին որ ժամին կգա»:*

Արթնության եւ թշնամուն դիմագրավելու այս կոչը երեք մակարդակ ունի՝ անհատական, ընտանեկան ու պետական, եւ այս մակարդակներից եւ ոչ մեկում ծուլությունն ու թմբիրը, ինչպես նաեւ «ութերորդ մահացու մեղք» կոչվող անտարբերությունը, «այս խնդիրն ինձ չի վերաբերում»-ը տեղ չունեն. դրանք ուղղակի անթույլատրելի են:

Անհատական պատրաստության ու զգոնության լավագույն օրինակներից մեկը հենց զինվորականի կերպարն է՝ անկախ աստիճանից: Ծառայության ողջ ընթացքում զինվորի գոտին կապված է, որ խորհրդանշում է ամեն վայրկյան թշնամուն դիմագրավելու եւ մարտի նետվելու նրա պատրաստակամությունը: Այդ պահը հեռու է թե մոտ, ոչ ոք չգիտի: Ով ժամը գիտի, կարող է անհրաժեշտ պահին հսկել, իսկ ով չգիտի, ամեն ժամ պիտի հսկի: Մեր դեպքում երկրորդն է, ուստի հայ զինվորն ու զորականը զօրուգիշեր են հսկում եւ պատվով կատարում ծառայողական պարտականությունները՝ իրենց զրկելով բաղձալի հանգստի նույնիսկ կարճատեւ պահերից: Գոտին մեջքներին կապած ու ճրագը վառած (հմմտ. Ղուկ. ԺԲ 35) սպասելը, ավետարանական պատմության նմանությամբ, նշանակում է հանգստի չտրվել, որովհետեւ երբ ցկյանս ծառայության ժամկետը լրանա, այն ժամանակ միայն ծառաները, մեր դեպքում՝ զինվորն ու զորականը, կարող են գոտիներն արձակել, ճրագները մարել ու գիշերային հանգիստը վայելել:

Գաղտնիք չէ, որ մենք բանակ-ժողովուրդ ենք, բանակ՝ նորածնից մինչեւ ալեհեր ծերունի, իսկ այդպիսին լինել մեզ պարտադրել է պատմական մեր բարդ ճանապարհը, ուստի ուղղակի պարտավոր ենք միշտ արթուն հսկել՝ բոլորս զինվոր դարձած՝ երբեք գոտիներս չթուլացնելով: Այդպիսի զգաստության ու արթնության պահերը ազգի լինել-չլինելու օրերին ակնհայտ ու անուրանալի արդյունք են տվել, ուստի, իբրեւ հավիտենական օրինակ, այն մեր աչքի առջեւից չպիտի հեռացնենք»,- ասաց սրբազան հայրը՝ հորդորելով զգոն ու սթափ մնալու հարցում մշտապես աղոթքի կանգնել, քանի որ աղոթքը մտքին պարզություն ու զորություն է հաղորդում եւ մղում միակ ճիշտ որոշումը կայացնելու, ինչը եւ հաճելի է նաեւ Աստծուն:

Վերջում Վրթանես սրբազանը, շնորհավորելով ներկաներին Հայոց բանակի կազմավորման տարեդարձի կապակցությամբ, մաղթեց, որ մշտապես արթուն լինեն, համարժեք գործերով ու քայլերով դիմագրավեն թշնամու ոտնձգությունները՝ գոտեպնդված մարմնավոր ու հոգեւոր սպառազինությամբ:

Ս. Պատարագի ավարտին, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հանրապետական մաղթանք, որի ժամանակ հոգեւոր դասը եւ արարողությանը ներկա ժողովուրդը աղոթք բարձրացրեցին երկնավոր Տիրոջը՝ Հայաստան աշխարհի խաղաղության ու անսասանության եւ Հայոց բանակի հաղթական ընթացքի համար: Այնուհետեւ Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Հայրապետն օրհնեց սպայական անձնակազմին ու զինվորներին բաշխվելիք «Աշոտ Երկաթի Խաչ» կրծքանշանները:

Ապա Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում կատարվեց պարգեւաբաշխություն: Ի գնահատություն հայրենիքին մատուցած ծառայությունների՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ընդառաջ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանի խնդրանքին, Հայ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանի արժանացրեց մի շարք բարձրաստիճան զինվորականների:

Նորին Սրբությունը «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշան հանձնեց ԱՀ ՊԲ հրամանատար, գեներալ-մայոր Կարեն Աբրահամյանին, ՀՀ ԶՈՒ հետախուզության վարչության պետ, գեներալ-մայոր Առաքել Մարտիկյանին, Հայ-ռուսական միացյալ զորախմբի հրամանատար, գեներալ-մայոր Տիգրան Փարվանյանին, ՀՀ ՊՆ ԲՍԽ խմբի անդամ գեներալ-մայոր Վլադիմիր Հայրապետյանին, ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության պետ, գնդապետ Գայանե Հովհաննիսյանին, ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանապետի տեղակալ, գնդապետ Աղասի Բագրատունյանին, ՀՀ ԶՈՒ 1-ին զորամիավորման հրամանատար գնդապետ Ժիրայր Պողոսյանին եւ ՀՀ ԶՈՒ 5-րդ զորամիավորման հրամանատարի տեղակալ, գնդապետ Արթուր Կիրակոսյանին: Վեհափառ Հայրապետը «Աշոտ Երկաթի Խաչ» կրծքանշաններ հանձնեց նաեւ ՀՀ ՊՆ նախարար Դավիթ Տոնոյանին, ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ, գեներալ-լեյտենանտ Արտակ Դավթյանին, պաշտպանության նախարարի տեղակալներին, վարչության պետերին ու բարձրաստիճան սպաներին:

Ընդունելության ժամանակ, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով, զինծառայողների հոգեւոր եւ հայրենասիրական դաստիարակության գործում զգալի ավանդի համար մի շարք եկեղեցականներ արժանացան պարգեւների:

Շարունակությունը՝ էջ 3

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

ՀՀ Ազգային ժողովի նախագահին

Սկիզբը՝ էջ 1

Իր հերթին ՀՀ ԱԺ նախագահն ընդգծեց, որ հասարակությունը մեծ ակնկալիքներ ու սպասումներ ունի 7-րդ գումարման Ազգային ժողովից: Տիար Արարատ Միրզոյանն իր մտորումները ներկայացրեց առկա մարտահրավերների հաղթահարման գործում խորհրդարանի առաքելության եւ պատգամավորների դերակատարության առնչությամբ: Այս համատեքստում ԱԺ նախագահը եւս կարեւորեց Եկեղեցի-պետություն համագործակցությունը:

Զրույցի ընթացքում Գարեգին Բ Հայրապետը ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանին ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կրթական, սոցիալական ծրագրերը, տեղեկություններ փոխանցեց Եկեղեցու գործունեության վերաբերյալ:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերստին իր օրհնությունն ու մաղթանքները բերեց ՀՀ ԱԺ նախագահին:

Ուրուգվայի նորանշանակ դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ուրուգվայի Արեւելյան Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Կարլոս Զգերբի ֆոն Շտայնմանին (նստավայրը՝ Թեհրան): Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով դեսպանին նշանակման առիթով, մաղթեց նրան արդյունավոր առաքելություն Հայաստանում: Ամենայն Հայոց Կաթողիկոսը հույս հայտնեց, որ դեսպանի գործունեությունն առավել կնապաստի երկու բարեկամ երկրների միջեւ կապերի սերտացմանն ու խորացմանը:

Անդրադառնալով Ուրուգվայում հայոց կյանքին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ ընդգծեց, որ շնորհիվ Ուրուգվայի իշխանությունների ջերմ ու հոգատար վերաբերմունքի՝ Հայոց ցեղասպանության տարիներին երկրում ձեւավորված հայ համայնքը հնարավորություն ունի ազատորեն ապրելու իր ազգային, հոգեւոր եւ մշակութային կյանքով: Նորին Սրբությունը հաստատեց նաեւ, որ Ուրուգվայն աշխարհում առաջինն է պաշտոնապես ճանաչել ու դատապարտել Հայոց ցեղասպանությունը:

Ուրուգվայի արտակարգ եւ լիազոր դեսպանը եւս անդրադարձ կատարեց իր առաքելությանը՝ հավաստիացնելով, որ ջանալու է էլ ավելի խթանել երկու երկրների միջեւ առկա համագործակցությունը: Ուրագվահայ համայնքի առնչությամբ դեսպանն ընդգծեց, որ այն սիրված ու գնահատված է:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ հայ ժողովրդի կյանքում Հայոց Եկեղեցու կարեւոր առաքելության մասին:

Հանդիպման վերջում Նորին Սրբությունն իր բարեմաղթանքներն ու օրհնությունը բերեց դեսպանին:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

«...այսօր Դավթի քաղաքում ձեզ համար
ծնվեց մի Փրկիչ, որ օծյալ Տերն է: Եվ սա՛ ձեզ
համար նշան կլինի.
խանձարուրով փաթաթած եւ մսուրի մեջ
դրված մի մանուկ կգտնեք»
(Ղուկ. Բ 11-12)

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան սքանչելագործ խորհրդով է ավետվում ամեն նոր տարվա գալուստը: Այս տոնն է համախմբում աշխարհի չորս ծագերի քրիստոնյաներին՝ խորհրդածելու կյանքի, խաղաղության ու արդարության շուրջ, աղոթելու եւ հոգեպես զորանալու, անսասան հավատով ու անսպառ հույսով ապրելու համար: Սուրբ Ծնունդով ազդարարվող տարեմուտի սեմին մարդկային կյանքի եւ աշխարհի նորոգության հիմնական պայմաններից են հին պատկերացումները թոթափելու կամքն ու վճռականությունը:

Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան հիշատակությունը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հինգ տաղավար տոներից է: Հայ Եկեղեցին Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնից առաջ կարգել է եւս չորս տոն՝ Եկեղեցու յոթ գլխավոր այրերի (Դավիթ մարգարե, Հակոբոս Տյառնեղբայր, Ստեփանոս Նախավկա, Պողոս ու Պետրոս առաքյալներ, Որոտման որդիներ Հակոբոս եւ Հովհաննես)՝ որպես սուրբ հավատի վեմերի հիշատակության օրեր. նշյալները կոչվում են Ավագ տոներ:

Սուրբ Ծնունդն ու Տիրոջ մկրտությունը Հայ Եկեղեցին տոնում է միասին՝ հունվարի 6-ին: Տիրոջ ծննդյան տոնակատարության առաջին հիշատակություններն սկսվում են Գ դարից: Արեւելքում մինչեւ Դ դարը Սուրբ Ծննդյան տոնը կապվել է Մկրտության (Աստվածհայտնության) տոնի հետ, եւ երկուսը նշվել են հունվարի 6-ին: Արդեն 336 թ. Հռոմի Եկեղեցին ծիսական նոր որոշում է ընդունել, այն է՝ Փրկչի Սուրբ Ծնունդը հունվարի 6-ի փոխարեն նշել դեկտեմբերի 25-ին: Պատմական որոշ տեղեկությունների համաձայն՝ Հռոմի Եկեղեցին այս որոշմամբ, ամենայն հավանականությամբ, նպատակ է ունեցել Արեւի չաստված Միթրայի՝ ժողովրդականություն վայելող եւ մեծ տարածում գտած տոնակատարությանը, որը նշվում էր դեկտեմբերի 25-ին, հակադրել արդարության Արեգակի՝ Քրիստոսի ծնունդը: Ավելի ուշ՝ Դ դարավերջին, Ասորիքում, ապա Ե դարակեսին գրեթե ողջ Արեւելքում (Ալեքսանդրիա, Անտիոք, Կ. Պոլիս) Փրկչի ծննդյան տոնը փոխադրվել է դեկտեմբերի 25-ին, իսկ Աստվածհայտնությունը նշվել է հունվարի 6-ին:

451 թվականի Քաղկեդոնի տիեզերաժողովում ընդունված որոշմամբ Քրիստոսի Սուրբ Ծննդյան հիշատակության օր է հաստատվել դեկտեմբերի 25-ը, իսկ Երուսաղեմի Եկեղեցին մինչեւ 549 թվականը շարունակել է այս տոնը նշել հունվարի 6-ին: Հայ Եկեղեցին հավատարիմ է մնացել հնավանդ ավանդությանը՝ անփոփոխ եւ հաստատուն կերպով պահելով առաքյալներից ավանդված նախնական ծիսական կարգը: Այս մասին են վկայում Հայոց տոնացույցի («Կանոնք ընթերցուածոց») տվյալները, ինչպես նաեւ Եփրեմ Ասորու «Չորս աւետարանների համաբարբառի մեկնութիւն» աշխատության թարգմանությունը, որտեղ գրված է. *«...եւ ծնաւ նա [Քրիստոս], որ օր վեց էր Քաղոց ամսոյ ըստ յունարէն թուոյ...»* (Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույց, եր., 1999, էջ 95): Իսկ Հովհան Ա Մանդակունու (478-490 թթ.) մշակած վեցերորդ կանոնում ասվում է. *«Եւ որ Ծնունդ առնեն յառաջ քան զՅայտնութիւնն՝ չէ արժան, զի սուտ է, զի Ծնունդն եւ Յայտնութիւն մի են, եւ յայտ յընթերցուածոցն է, որ ասէ. «Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս»* (տես Մատթ. Ա 18. «Կանոնագիրք հայոց», հտ. Ա, աշխատ.՝ Վ. Հակոբյանի, Եր., 1964, էջ 499):

Հին Ուխտում առկա մարգարեությունները վկայում են մարդկության Փրկչի ծնունդի մասին. հիշենք Հակոբ նահապետի մարգարեությունը. *«Հուդայից իշխան չի պակասելու, ոչ էլ առաջնորդ՝ նրա կողերից, մինչեւ որ գա Նա, ում պատկանում են հանդերձյալները»* (Ծնն. ԽԹ 10):

Միքիա մարգարեն կանխասում է. *«Եվ դու, Բեթղեհեմ, Եփրաթայի սակավամարդ տուն, կլինես Հուդայի երկրի հազարավորների մեջ, քեզնից պիտի ելնի ինձ համար Իսրայելի մի Իշխան, եւ Նրա ծագումը աշխարհի սկզբի օրերից է»* (Ե 2): «Բեթղեհեմ» թարգմանվում է «հացի տուն». երկնավոր Հացը՝ Հիսուս Քրիստոս, այստեղ ծնվելով՝ ընծայվեց աշխարհին:

Եսային մարգարեանում է. *«Ահա կույսը պիտի հղիանա ու Որդի ծնի, եւ Նրա անունը պիտի լինի Էմմանուել»* (Ես. է 14): Իսկ սաղմոսերգուն վկայում է, թե որ ազգատոհմից է լինելու կույսը. *«Տերը ճշմարտությամբ երդվեց Դավթին ու չստեց նրան. «Քո որովայնի պտղից պիտի նստեցնեմ քո գահին»* (Սաղմ. ՃԼԱ 11), ապա հավելում՝ *«Նրա սերունդը կհաստատեմ հավիտյանս հավիտենից, եւ Նրա գահը՝ ինչպես օրերը երկնքի»* (Սաղմ. ՁԸ 30): Սուրբգրային վկայությունները բազմաթիվ են, ուստի ներկայացրինք միայն որոշները:

Հին Կտակարանում հիշատակված բազմաթիվ դեպքեր նախօրինակը կամ կանխասացությունն էին այն նշանակալի իրադարձությունների, որ իրականանում են Նոր Կտակարանում: Աշխարհի արարման ժամանակ Արարչի խոսքով միայն, առանց սերմի եւ հողի մշակության, երկիրը բույսեր է աճեցնում եւ պտղաբերում (հմմտ. Ծնն. Ա 11): Քրիստոսի ծննդյան դեպքում, առանց մարդկային սերմի՝ միայն Աստծո զորությամբ, Կույսը հղիանում ու որդի է ծնում: Գաբրիել հրեշտակը Մարիամին ավետում է. *«Ուրախացի՛ր, ո՛վ շնորհընկալ, Տերը քեզ հետ է... ահա՛ դու կհղիանաս եւ կծնես մի որդի ու նրա անունը Հիսուս կդնես: Նա մեծ կլինի եւ Բարձրյալի Որդի կկոչվի... Նա հավիտյան կթագավորի Հակոբի տան վրա, ու Նրա թագավորությունը վախճան չի ունենա»* (Ղուկ. Ա 28-33):

Ավետարանը վկայում է, որ այդ օրերին Օգոստինոս կայսրը ողջ երկրում մարդահամար անցկացնելու հրաման է տալիս:

Շարունակությունը՝ էջ 4

Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորականը Տիգրան Մանսուրյանին

Նունվարի 27-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել կոմպոզիտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ժողովրդական արտիստ, Հայ Եկեղեցու շքանշանակիր Տիգրան Մանսուրյանին՝ ծննդյան 80-ամյակի առիթով:

«Մեծարգո՛ տիար Մանսուրյան,

Հայրապետական օրհնությամբ Մեր սրտագին շնորհավորանքներն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ ծննդյան 80-ամյա հոբելյանի ուրախալի առիթով:

Ձեր կյանքի նշանակալի այս հանգրվանը Դուք դիմավորում եք ստեղծագործական կյանքի բեղուն վաստակով՝ վայելելով մեր ժողովրդի ջերմ սերն ու հարգանքը: Որպես մեծանուն կոմպոզիտոր ու արվեստագետ՝ Դուք արժանացել եք համաշխարհային լայն ճանաչման երաժշտության ասպարեզում՝ Ձեր բարձր նվաճումներով ու գովարժան ձեռքբերումներով: Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ տաղանդաշատ հայորդուդ հոգեթով ստեղծագործությունները հնչել են աշխարհի տարբեր երկրների հանրահայտ բեմերից՝ հիացմունք ու բավականություն պարգեւելով երաժշտասեր հասարակությանը: Մեծապես ընդունված ու սիրված է Ձեր կինոերաժշտությունը, որ քնարականությամբ, ելեւէջների հիանալի ներդաշնակությամբ մեծ ազդեցություն ու տպավորություն է թողնում ունկնդիրների վրա: Ձեր ուրույն արվեստն առանձնահատուկ է հայկական երաժշտության նորովի մեկնաբանությամբ ու դրսեւորումներով, որոնց միահյուսված են Ձեր ներաշխարհի հույզերն ու ապրումները, հայրենիքի ու մեր ժողովրդի հանդեպ նվիրական զգացումները:

Սիրելի՛ տիար Մանսուրյան, մեր ժողովրդի շնորհաշատ զավակիդ բացառիկ արվեստը՝ լուսեղեն մեղեդիներով ու բարձրաճաշակ հնչերանգներով, արտահայտում է նաեւ մեծանուն հայորդուդ հոգեւոր խորին ապրումները, Աստծո հետ աղոթական հաղորդակցությունն ու մտասեւեռումը՝ դեպի երկնայինն ու հավիտենականը: Դրա վառ վկայությունն են կոմիտասյան սկզբունքների կիրառումը Ձեր արվեստում, հոգեւոր ուղղվածությամբ գործերի, սուրբ Ներսես Շնորհալու «Հավատով խոստովանիմ» աղոթքների հիման վրա երկնած ստեղծագործությունները: Հայրապետիս համար սրտի խորին գոհունակություն է հաստատել Ձեր սերն ու որդիական հավատարմությունը հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Աստծո կամոք Մենք բարեպատեհ առիթն ենք ունեցել վայելելու Ձեր ընկերակցությունը հովվապետական Մեր այցերի ընթացքում, երբ Դուք մաս եք կազմել Մեր շքախմբի եւ Ձեր ներկայությամբ ոգեշնչել ու քաջալերել եք հավատավոր Մեր զավակներին: Ուրախությամբ ենք հիշում, որ մշակույթի բնագավառում Ձեր գնահատելի ավանդի ու գովելի վաստակի համար Ձեր կուրծքը զարդարել ենք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշանով:

Ի խորոց սրտի աղոթում ենք առ ամենակալն Աստված, որ պահի ու պահպանի Ձեզ Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո, շնորհի արեւշատություն, երջանկություն, ստեղծագործական նորանոր հաջողություններ եւ ամենայն բարիք»,- ասված է Ամենայն Հայոց Հայրապետի շնորհավորագրում:

Բանակի օրվա առիթով Դատարագ եւ...

Սկիզբը՝ էջ 2

«Անդրանիկ Օզանյան» մեդալով պարգեւատրվեցին Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տաթեւ եպս Հակոբյանը, Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանի տեսուչ Մովսես վրդ. Սարգսյանը: «Գարեգին Նժդեհ» մեդալ հանձնվեց Բերդի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Արամ քհն. Միրզոյանին, Արարատյան հայրապետական թեմի Երեւան քաղաքի Կաթողիկե Ս. Աստվածածին եւ Ս. Աննա եկեղեցիների հոգեւոր հովիվ Զենոն քհն. Բարսեղյանին, գնդերեցներ Համազասպ քհն. Հագեյանին ու Երեմիա քհն. Սարգսյանին: «Դրաստամատ Կանայան» մեդալ շնորհվեց գնդերցներ Գեւորգ սրկ. Ստեփանյանին, Մանվել սրկ. Սարգսյանին եւ Հակոբ սրկ. Մալխասյանին:

Շնորհաբաշխությունից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր շնորհավորանքներն ու օրհնությունը բերելով ՀՀ ԶՈՒ բարձրագույն սպայակազմին՝ Բանակի օրվա կապակցությամբ, ուրախությամբ արձանագրեց, որ գեղեցիկ ավանդույթ է դարձել բանակին նվիրված տոնը Մայր Աթոռում սկսել աղոթքով՝ հայրենիքի ու նրա պահապանների համար երկնավոր Տիրոջից հայցելով խաղաղություն եւ ոգու անսասանություն: Նորին Սրբությունը Հայոց բանակի քաջազուն մարտիկներին մաղթեց, որ ամենակալ Տերը մշտապես ամուր պահի նրանց բազուկը, եւ երբեք չխաթարվի Հայոց աշխարհի սահմանների խաղաղությունը:

Իր հերթին ՀՀ պաշտպանության նախարարը, շնորհավորելով բոլոր պարգեւատրվածներին, շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ զինվորականների նկատմամբ դրսեւորվող մշտական հոգածության եւ ուշադրության համար: Պրն Տոնոյանը կարեւորեց գնդերեցների ծառայությունը ՀՀ Զինված ուժերում, նաեւ վստահեցրեց, որ Հայոց բանակի քաջարի զինվորները հանդարտ հոգով եւ անսասան հավատով անելու են առավելագույնը՝ հանուն հայրենիքի պաշտպանության:

Արեւելյան ուղղափառ-կաթոլիկ միջեկեղեցական երկխոսության միջազգային հանձնախմբի ժողովը Վատիկանում

Նունվարի 27-ին Վատիկանում իր հերթական՝ 16-րդ հանդիպումն սկսեց Արեւելյան Ուղղափառ - Կաթոլիկ միջեկեղեցական երկխոսության միջազգային հանձնախումբը՝ Քրիստոնյաների միության պապական հանձնախմբի հյուրընկալությամբ: Նախատեսված ծրագրի համաձայն՝ Արեւելյան Ուղղափառ եւ Կաթոլիկ Եկեղեցիների ներկայացուցիչները նախ հանդիպեցին առանձին՝ եկեղեցական ընտանիքների ձեւաչափով, այնուհետեւ հունվարի 27-ի երեկոյան տեղի ունեցավ հանձնախմբի 16-րդ հանդիպման առաջին լիագումար նիստը:

Հանձնախմբի քննարկման թեման Եկեղեցու յոթ խորհուրդներից ս. Պսակն էր՝ ծիսական, աստվածաբանական ու կանոնական իր առանձնահատկություններով: Միջազգային աստվածաբանական հանձնախմբի անդամները, նախատեսված ծրագրով, առաջիկա օրերին քննարկեցին ինչպես եկեղեցական երկու ավանդույթների մեջ Պսակի խորհրդակատարության, ծիսական-աստվածաբանական ու կանոնական ընկալման ընդհանրությունները, այնպես էլ՝ տարբերություններն ու եկեղեցաբանական առանձնահատկությունները:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին միջազգային աստվածաբանական հանձնախմբում ներկայացված էր հետեւյալ պատվիրակությամբ՝ Խաժակ արք. Պարսամյան (Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական ներկայացուցիչը Վատիկանում), Շահե ծ. վրդ. Անանյան (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու) եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից Մակար եպս Աշկարյանն ու Պողոս վրդ. Թինկջյանը:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կատարվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների նոր նշանակումներ:

• Արիս աբդ. Տոնոյանը, ազատվելով Վանորեից տեսչությունում ստանձնած պարտականություններից, հետ է կանչվել Մայր Աթոռ՝ որպես վանաբնակ միաբան:

• Կյուրեղ վրդ. Դավթյանն ազատվել է Մայր Աթոռի կադրերի բաժնի տնօրենի պաշտոնից եւ ծառայության կոչվել Վանորեից տեսչությունում՝ Վանորեից տեսչի իշխանության ներքո:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ՄԱՇՎԱՆ ՖՈՒԳԱ

Ա. Ամազոնի պոետիկան



Օվկիանոսների տեղատվության ու մակընթացության պես հզոր գրող է Գաբրիել Գարսիա Մարկեսը: Նրա «Նահապետի աշունը» վեպը հեղեղ է. հարավամերիկյան իսպանախոս երկրներին ուղղված տարածական ինչ լայն հայացք, արեւադարձային տեղատարափ անձրեւների պես հորդուն ինչպիսի՜ պատում, խոսքի ջրհեղեղ, պատկերների ջրվեժ, կյանքի ու բնության բոլոր բնագավառներն ընդգրկող հանրագիտարան: Ինչպիսի՜ դիտարկումներ, համեմատություններ, ոճի ազատություն, խոսքի անափ ծավալում, որի հորձանքն ասես օվկիանոսը լցվող վարար ջրերի ճյուղավորվող գետաբերան լինի:

Սա հենց խոսքի հրաշքն է, կախարդանքը, դյութանքը, իր ասած՝ գերբնական, մեր՝ հարմարեցրած մոգական իրապաշտությունը:

Բազմաձայնությունը պատմողի ու պատմողների միասնությամբ է, ինչպես երգչախումբը՝ խմբերգի մեջ մեներգը մեկ մեկն է կատարում, մեկ՝ մյուսը: Հեղինակային ձայնը գլխավոր հերոսին դիմելու իր ձեւն ունի՝ «Իմ գեներալ», միջանկյալ գեներալի ձայնն է, ձուգահեռ կամ հընթացս անմիջապես գործողությանը մասնակցող կամ մտաբերվող հերոսների ձայներն են: Իրականությունը ճեղքվում, ու հիշողությունը մտաբերում է պատմություններ, առասպելախառն հրաշապատումներ: Այս բազմաձայն եւ աստիճանաբար ճյուղավորվող պատումի առանցքը գետի հոսանքն է դեպի օվկիանոս. ընթացքը՝ գետի ծավալումներն են՝ մի տեղ՝ լայնացող, հեռացող ափեր, մեկ այլ տեղ՝ նեղացող, միջակայքում լճեր ու ճահիճներ, անտառներ ու կանաչուտներ, հոսանքն ի վար՝ ջրվեժներ ու կողքերից փախչող գետակներ...

Վեպի նախադասությունները, որոնց թիվն ընդամենը 126 է, շարունակվում են առանց պարբերության եւ երբեմն ընդգրկում գրքի 20 էջ, հիմնական մտքի բնական զարգացումներ են՝ դրվագը լրացնող շեղումներով, ծավալումներով ու թավալումներով... Վերջակետի մասին չի էլ մտածում, որովհետեւ գեներալի մահվան հոգեվարքը եւս չի վերջանում, իսկ երբեմն բացակայում է կետադրությունն անգամ, երբ գեներալն ընկնում է գիտակցության հոսքի մտագալարների մեջ: Իրենց բնույթով ոչ թե սոսկ բնական, այլ գերբնական են նաեւ մտքի հարահոս ու հարաճուն շարժման բոլոր կառույցները: Մի տեսակ ամեն ինչ շարժվում է բոլոր ուղղություններով՝ ոչ միայն առաջ, այլեւ ետ, էլ ավելի ետ, ավելանում են կողքերից եկող լրացուցիչ դիպաշարերը: Վեպը հյուսվում- ընդարձակվում է լեզվի պատկերավորման միջոցների բոլոր հնարավորություններով. ոչ միայն համեմատություն, մակդիր ու փոխաբերություն, այլեւ չափազանցություն ու նվազեցում, գրոտեսկ ու շարժ:

Նախադասություններն այսպես նմանվում են արեւադարձային գետերի վարար ու ճյուղավորվող հոսքի: Այդպես մեծ Ամազոնն է՝ բազմաթիվ վտակներով, ենթավտակներով, գետերով ու գետակներով՝ իր ընդգրկած ամբողջ ավազանով՝ լճեր, ճահիճներ, անտառներ, բուսական ու կենդանական շատ հարուստ աշխարհ:

Ահա այդպես՝ Մարկեսն իր վեպը գրել է որպես ջրառատ գետ, որպես Ամազոն. բնաշխարհի ձեւը, դրվածքը, կառուցվածքը, լիությունը՝ որպես մտավոր մոդել, որպես համակարգ, գեղարվեստականցվել են: Ինչպես ազատ, վայրի ու անսահմանափակ հոսում տարածվում է Ամազոնը, այդպես էլ գրում է Մարկեսը: Սա այլ բան չէ, քան բնության բանարվեստ, այլ կերպ՝ Ամազոնի պոետիկա: Այսինքն՝ ստեղծագործողն իր պատմաաշխարհագրական միջավայրի մեջ է ու դրա ծնունդ:

Պատմաաշխարհագրական զուգահեռ անդրադարձով նույնը Համո Սահյանի պոեզիան է՝ քար ու քարափ, սար ու ձոր, մասրի թուփ ու բարդի, արահետ ու կածան, ավերակ վանք ու լքված տուն, որ դառնում են քարե պատարագ ու քարափների երգ: Այնտեղ օվկիանոսային տորնադոներն ու ցիկլոններն են, ուրագաններն ու երկիրը շարժող ցունամիները, այստեղ՝ քարերի բուքը, հողմն ու փոթորիկը, լեռնային սամումը: Այնտեղ Ամազոնն է, այստեղ՝ Լորագետի ու Որոտանի գետային տեղանքային բանարվեստը՝ որպես մտածողության կառուցվածք, որպես սարի, ձորի, խոտի ու քարափի կշռույթ...

Մեր մեջ առավելապես իշխում է հայոց պատմական ճակատագրի ասքապատումը՝ միախառնված առանձին հերոսների գործունեությանը, ժամանակի բարքերին, բնաշխարհի գույներին, առասպելի ձայներին ու պատմաաշխարհագրական ամբողջ միջավայրին: Հայ գրողը, եթե ազդեցության թակարդում չէ, չի կարող Մարկեսի պես գրել, որովհետեւ չի կրում նրա պատմաաշխարհագրական ավանդույթը: Իրենը ուրիշ է: Այս ուրիշն է գեղարվեստի ճանապարհը: Հայ գրականության մեջ այս դիտարկմամբ շղթա են կազմում Աբովյանը, Նալբանդյանը, Պատկանյանը, Ռաֆֆին, Պռոշյանը, Աղայանը, Հովհաննիսյանը, Թումանյանը, Չարենցը, Համաստեղը, Բակունցը, Մահարին, Սահյանը, Մաթեւոսյանը, Գալշոյանը... Եվ ընդհանրապես գրականության (արվեստի բոլոր տեսակների) առանձնահատկությունը մեծապես պայմանավորված է պատմաաշխարհագրական գործոնով, որ իր հետ բերում է միջավայր, հոգեկերտվածք, գործողության նպատակ եւ դրան հասնելու ճանապարհ:

Մարկեսի գեղարվեստական համակարգում, քանի որ բաց բնություն է ու բնական վիճակ, գեղեցկությունից բացի՝ կան նաեւ քայքայում, ճահիճ, նեխահոտ, մարդկային առնչությունների մեջ՝ գռեհկություն, հայհոյանք, գարշանք... Սա եւս պետք է ընկալել որպես բնական անհրաժեշտություն, որովհետեւ նրա գեղարվեստական աշխարհը շատ ամբողջական է թե՛ մեծի դեպքում, թե՛ փոքրի, թե՛ գեղեցիկի, թե՛ տգեղի... Սա ոչ թե գեղեցիկի գրականություն է, այլ՝ կյանքի, որտեղ գեղեցիկի կողքին նաեւ տգեղն է:

Այս վեպը հեղինակը բնորոշել է որպես պոեմ՝ «իշխանության միայնության մասին»: Չարենցի ասած՝ պոեմանման վեպն է՝ որպես «Երկիր Նայիրիի» բնորոշում, Գոգոլի պոեմը՝ ի վերա «Մեռած հոգիների»: Իրոք, պոեմ՝ գեղարվեստական լեզվի արտակարգ բազմերանգ դրսեւորումներով, պատկերների զարդարուն դրասանգներով, ազատ կշռույթի յուրահատուկ դարձածաներով, պատումի թարմ օդի հորձանքով եւ խոսքը ապրող օրգանիզմի պես կենդանի պահող աստվածային շնչառությամբ:

Ավելի վաղ գրված «Հարյուր տարվա մենությունն» այնքան կենդանի ու կենսական միջավայրի մեջ էր, որ մենությունն առանձնապես չէր զգացվում: Մենությունը՝ որպես դատապարտվածություն, այստեղ է՝ «Նահապետի աշունը» վեպում, որ հենց հարյուր տարվա պատմություն ունի: Նորից մտաբերենք նրա խոսքը՝ «պոեմ իշխանության միայնության մասին»:

Աշխարհը լի է բռնակալ իշխանավորներով, որոնց կերպարները թափանցել են բանահյուսության մեջ՝ հատկապես հեքիաթներ, դյուցազներգություններ, ապաեւ՝ բազմաթիվ գեղարվեստական երկեր: Մարկեսի բռնապետն իր նմանը չունի, որովհետեւ թեեւ ունի անուն՝ Սաքարիաս, մայր՝ Բենդիսիոն Ալվարադո, բայց բոլոր դեպքերում ընդհանրացված կերպար է: Ըստ հեղինակային ակնարկի՝ 19-րդ դարի առաջին կեսի ծնունդ է, որի ո՛չ ծննդյան, ո՛չ մահվան թվականները հայտնի չեն: Բռնապետի երկիրը եւս անուն չունի, գտնվում է Կարիբյան ավազանում:

Շարունակությունը՝ էջ 6

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Սկիզբը՝ էջ 3

Հովսեփն ու Մարիամը Գալիլիայի Նազարեթ քաղաքից գնում են Բեթղեհեմ՝ Դավթի քաղաք. Աստծո Որդին ծնվում է քաղաքից դուրս գտնվող մի քարայրում, որն անձրեւային ու ցուրտ եղանակներին որպես նախրատուն էր ծառայում: Եվ այստեղ՝ քարայրում, Կույսը ծնում է աշխարհի Փրկչին ու բարուրելով մանկանը՝ դնում է մսուրի մեջ. իրականանում է Եսայիի մարգարեությունը՝ *«...ժողովուրդը, որն ընթանում էր խավարի միջով, տեսավ մեծ լույս...»* (Թ 2, հմմտ. Մատթ. Դ 16):

Ըստ ավանդության՝ ջրհեղեղից հետո Սեմը մարգարեաբար այդտեղ էր թաղել նախամորը՝ Եվային, իսկ Գողգոթայում՝ նախահորը՝ Ադամին: Աստվածածնով ողջանում է Եվան, իսկ խաչով՝ Ադամը, ու դրանով նախամոր անեծքը փոխվում է օրհնության, իսկ տրտմությունը՝ ուրախության:

Խանձարուրի մեջ փաթաթված եւ մսուրի մեջ դրված Աստվածորդուն առաջինն այցելում են հովիվները (հմմտ. Ղուկ. Բ 10-11):

Սուրբ Գիրքը վկայում է, որ այնուհետեւ Արեւելքից երեք մոգեր են գալիս Երուսաղեմ՝ մանուկ Հիսուսին երկրպագելու. վերջիններս հարցնում են՝ *«Ո՞ւր է հրեաների արքան, որ ծնվեց, որովհետեւ նրա աստղը տեսանք արեւելքում եւ եկանք նրան երկրպագելու»* (Մատթ. Բ 1-2): Ըստ ավանդության՝ այդ մոգերը թագավորներ էին՝ առաջինն ազգությամբ պարսիկ էր՝ Մելքոն անունով, երկրորդը՝ հնդիկ՝ Գասպար անունով, իսկ երրորդը՝ արաբ՝ Բաղդասար անունով: Նրանք մանուկ Հիսուսին բերում են ընծաներ, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր հոգեւոր խորհուրդը. այսպես՝ ոսկին, որը թագավորներին էին նվիրաբերում, խորհրդանշում էր Հիսուսի՝ Թագավոր լինելը. կնդրուկը խունկի ամենաանուշահոտ տեսակն է եւ խորհրդանշում էր Քրիստոսի աստվածությունը, եւ զմռուռը, որով պատում էին մահացածների մարմինը, խորհրդանշում էր Աստծո Որդու քավչարար մահը: Այսինքն՝ երեք մոգերը այս ընծաներով խոստովանում են, որ Հիսուս Քրիստոս իրենց Թագավորն է, Աստված ու Փրկիչը:



Ավետարանի համաձայն՝ երբ լրանում է Հիսուսի երեսուն տարին, Նա Գալիլիայից Հորդանան է գալիս՝ մկրտվելու (հմմտ. Մատթ. Գ 13-17, Մարկ. Ա 9-11, Ղուկ. Գ 21-22): Աստվածորդին մոտենում է Հովհաննես Մկրտչին՝ նրա ձեռամբ մկրտվելու, սակայն վերջինս ընդդիմանում է՝ *«Ինձ պետք է, որ քեզնից մկրտվեմ, եւ Դու ինձ մոտ ես գալիս»* (Մատթ. Գ 14): Քրիստոս պատասխանում է, որ դա է Հոր կամքը, եւ այդպիսով իրենք պետք է կատարեն Աստծո արդարությունը (հմմտ. Մատթ. Գ 15): Աստվածորդին մկրտվում է Հորդանանում՝ Հովհաննես Մկրտչի ձեռամբ, ու երբ աղոթքի է կանգնում, երկինքը բացվում է, եւ Սուրբ Հոգին աղավնակերպ իջնում է Նրա վրա, ապա եւ լսվում է Բարձրյալի ձայնը՝ *«Դա՛ է իմ սիրելի Որդին, որն ունի իմ ամբողջ բարեհաճությունը»* (Մատթ. Գ 17):

Տերը զորացրեց սուրբ Կույսին՝ Իրեն ըստ մարմնի ծնելու համար, մկրտվեց՝ իջնելով ջրի մեջ, այն սրբելով ու զորացնելով եւ սուրբ Ավազանի արգանդը պտղատու դարձնելով, որպեսզի Սուրբ Հոգու միջոցով մենք վերստին ծնվենք սուրբ Ավազանից ու կոչվենք Աստծո որդիներ:

Աստվածհայտնությունը կամ Հայտնությունը մեր Տեր Հիսուս Քրիստոսի մկրտության հիշատակությունն է: Հայտնության տոն է կոչվում, քանզի արարածները տեսան Աստծուն. Տերը ծնվելով հայտնվեց թե՛ երկնայիններին, թե՛ երկրայիններին: Տիրոջ ծննդյամբ իրագործվեց նաեւ Նրա հայտնությունը. Պողոս առաքյալն ասում է. *«...Աստված Իր շնորհը հայտնեց որպես փրկության միջոց բոլոր մարդկանց...»* (Տիտ. Բ 11): Աստվածորդու մկրտության ժամանակ հայտնի դարձավ Նրա աստվածությունը. Նա, որ Հոր էությունից է եւ Լույսից ծնված անճառելի Լույսը, ժամանակի լրումին խոնարհվեց հայրական ծոցից, բնակվեց սուրբ Կույսի անարատ արգանդում, նրա մարմնից մաս առնելով՝ մարմնավորվեց եւ հրաշապես մարդանալով՝ ծնվեց Բեթղեհեմում՝ Դավթի քաղաքում, եւ պատվեց խանձարուրով:

Քրիստոսի մկրտության ժամանակ հայտնվեցին աստվածային երեք Անձերը՝ Սուրբ Հոգին՝ Քրիստոսի վրա աղավնակերպ իջմամբ (հմմտ. Մատթ. Գ 16, Մարկ. Ա 10, Ղուկ. Գ 22), Հայրը՝ երկնքից հնչող ձայնով՝ *«Դա՛ է իմ սիրելի Որդին, որն ունի իմ ամբողջ բարեհաճությունը»* (հմմտ. Մատթ. Գ 17, Մարկ. Ա 11, Ղուկ. Գ 22), եւ Հորդանանում մկրտվող Որդին:

Շարունակությունը՝ էջ 7

Անսահման տաղանդավոր ու անսահման հայրենասեր

Ռաֆայել Իսրայելյան —110



Սկիզբը՝ 2018-ի թիվ 21-24, 2019-ի թիվ 1

Ինչպես վկայում է Երեւանի Ծիծեռնակաբերդի բարձունքում վեր խոյացող Հայոց մեծ եղեռնի զոհերի հուշարձանի համահեղինակ Սաշուր Քալաշյանը, Եղեռնի զոհերի հիշատակին հուշարձան կանգնեցնելու գաղափարն առաջինը Իսրայելյանն է առաջ քաշել Ճարտարապետների միությունում տեղի ունեցած ժողովի ժամանակ՝ 1964 թ.:

Իսրայելյան հայրենասերին հետաքրքիր բնութագրում է տվել Լեւոն Հախվերդյանը. «Նոստալգիան, հայերեն ասենք՝ հայրենաբաղձությունը, մի հիվանդություն է, որ ունենում են բնաշխարհից հեռու գտնվող մարդիկ: Ռաֆայել Իսրայելյանի դեպքը բացառիկ է՝ մարդը տառապում է նոստալգիայով հենց բնաշխարհում, եւ հենց դա էլ, զարմանալի փոխակերպմամբ, դառնում է այդ բնաշխարհը գեղեցկացնող կոթողներ»:

Հայրենապաշտ արվեստագետին հոգու մեծ ցնծություն էին պարգեւում իր ազգի նշանավոր զավակների հաջողությունները. 1963 թ. Տիգրան Պետրոսյանը հաղթում է շախմատի աշխարհի չեմպիոնի կոչման մրցախաղում եւ դառնում աշխարհի չեմպիոն: Իսրայելյանը մեծ ոգեւորություն է ապրում եւ իր ուրախությունն արտահայտելու ու իմաստուն խաղի նորաոծ հայ արքային շնորհավորելու համար ձեռնամուխ է լինում հուշամեդալի պատրաստմանը. անձամբ է իրականացնում մեդալի գեղարվեստական լուծումը՝ վրան պատկերելով Քուռկիկ Ջալալին:

Ազգայինից բացի՝ Իսրայելյանի մեջ զորեղ էր նաեւ գեղեցիկի պաշտամունքը: Անգամ արտադրական շինությունները նա կամենում էր օժտել ազգայինով ու գեղեցիկով, օրինակ՝ «Արարատ» տրեստի գինու մառանները, Օշականի գինու գործարանը եւ այլն:

Ռաֆայել Իսրայելյանը երբեք չի ցանկացել զբաղվել վարչական աշխատանքով եւ վարել պաշտոններ, քանի որ դրանք կլանում էին նրա ստեղծագործական ավյունն ու ժամանակը: Նա նույնիսկ հոժարակամ հրաժարվել է ղեկավար պաշտոնից՝ փոխանակելով այն ավելի ցածր պաշտոնի հետ, որպեսզի այլեւս ժամանակ չվատնի թղթաբանական եւ վարչական գործերի վրա:

Զայրանում էր, երբ աշխատանք չէր ունենում: Արեգ Իսրայելյանը հիշում է, որ հիվանդության ծանր օրերին, ամենափոքր հնարավորության դեպքում իսկ, հայրը գնում էր աշխատանքի:

Արածը միշտ բոլորին ցույց էր տալիս, սիրում էր կարծիքներ լսել:

Գիտելիքների մեծ պաշար ուներ: «Ընթերցասեր էր իմ ընկերը, բավականաչափ տեղյակ հայկական, ռուսական եւ համաշխարհային գրականությանը: Լայն էր նրա գրական հետաքրքրությունների շրջանակը, բայց չեմ կարող ասել, թե կարդում էր որոշակի ծրագրով: Ամեն տեսակի գիրք կարելի էր տեսնել նրա ձեռքին՝ վեպ, պատմվածք, ճամփորդական ակնարկ, արկածային գրքեր, նշանավոր մարդկանց կենսագրություններ, աշխարհագրական ատլասներ, նույնիսկ վիճակագրական տեղեկագրեր:

Առանձնապես հրապուրված էր ֆոլկլորային գրականությամբ, շատ էր կարդում հեքիաթներ, առասպելներ, առակներ: Նրա գրադարանում կուտակվել էր աշխարհի շատ ժողովուրդների այդ կարգի գրականություն»,– գրում է Վարազդատ Հարությունյանն իր հուշերում:

Իմաստուն խոսքերը միշտ գրի էր առնում:

Իսրայելյանի երաժշտական նախասիրությունները, ինչպես սպասելի է, խիստ ազգային էին՝ ժողովրդական երգեր, կոմիտասյան երգեր եւ երաժշտություն: Անձամբ երգել չգիտեր, սակայն միշտ ձայնակցում էր ճարտարապետ, հանրահայտ «Դլե յաման»-ի կատարող Վարազդատ Հարությունյանին, աշխատելիս միշտ ինչ-որ մեղեդիներ էր հորինում ու սուլում:

Կենցաղում շատ համեստ էր, մաքրասեր ու ճշտապահ: Կյանքով լի էր, կատակասեր ու սրախոս, սեր ուներ երգի, պարի, խնջույքի, ուրախության նկատմամբ: «Իմ հիշողության մեջ հայրս տպավորվել է որպես չափազանց շռայլ մի անհատականություն, որ պատրաստ էր ամեն ինչ տալու մերձավորին, ընկերներին, իր արվեստին ու արվեստակիցներին, իր հայրենիքին ու ժողովրդին»,– հոր մասին գրում է Արեգ Իսրայելյանը:

Թեպետ Ռաֆայել Իսրայելյանը 1970 թ. արժանացել էր «Ժողովրդական ճարտարապետ» կոչմանը, 1951-ին էլ՝ Ստալինյան առաջին աստիճանի մրցանակի, այնուհանդերձ, ամենեւին «հարմար» մարդ չէր խորհրդային իշխանության համար, քանզի այն բացառիկ անհատներից էր, որոնք առանց վարանելու, բացահայտ կերպով արտահայտում եւ պաշտպանում են իրենց սկզբունքները. դա կարողանում էր անել ճարտարապետության միջոցով:

Իսրայելյանն արվեստակիցների ու ժողովրդի մեջ վայելում էր վիթխարի հեղինակություն, սեր եւ հարգանք: Նրան ճանաչում էին ինչպես ճարտարապետներ, նկարիչներ, քանդակագործներ, գիտության եւ մշակույթի այլ ոլորտների ներկայացուցիչներ, այնպես էլ հասարակ մարդիկ, նա մեծ հարգանք էր վայելում նաեւ Խորհրդային Հայաստանի ղեկավարության շրջանում, ինչի շնորհիվ հանրապետության ղեկավարներն անկարող էին լինում խոչընդոտել վարպետի ազգային մտահղացումների իրականացմանը, եւ հավերժի մեջ իրենց երթն էին սկսում համազգային նշանակություն ունեցող իսրայելյանական կոթողները:

Շարունակությունը՝ էջ 7

Լեզվի հարցերը Տերյանի հոդվածներում եւ նամակներում

Վայ գրական լեզվի հարցերը մշտապես մտահոգել են Վահան Տերյանին: Բանաստեղծի տեսակետները լեզվական հարցերի վերաբերյալ արտահայտված են հոդվածներում («Հոգեւոր Հայաստան», «Ալեքսանդր Ծատուրյան», «Անունը կա, ամանումը չկա», «Արջի ծառայություն», «Մի բացատրություն»), նամակներում եւ Հովհաննես Հովհաննիսյանին ու հայ բանաստեղծության լեզվի հարցերին նվիրված երկու զեկուցումներում, ինչպես նաեւ 1914 թ. կարդացած «Հայ գրականության գալիք օրը» հայտնի զեկուցման մեջ: Նշված զեկուցումների բնագրերը չեն պահպանվել, դրանց բովանդակության սեղմ շարադրանքը ներկայացվել է Պ. Մակինցյանի կողմից եւ տպագրվել «Մշակ» թերթում *(Թիֆլիս, 1917, թիվ 26)*:

Լեզվի վերաբերյալ բանաստեղծի տեսակետները ներառում են հարցերի հետեւյալ շրջանակը.

ա. գրական լեզվի դերը, գործածության ոլորտներն ու մշակման ուղիները,

բ. լեզվի «կենտրոնացման» հարցը, այսինքն՝ գրական լեզուն գործածելի դարձնելու եւ կանոնավորելու խնդիրը,

դ. օտարախոսության հաղթահարումը՝ որպես լեզվի զարգացման կարեւոր գործոն,

գ. բանաստեղծի դիրքորոշումը փոխառությունների վերաբերյալ:

Տերյանն ամենից առաջ մտահոգվել է հայ գրականության գալիք օրով, ուղիներ փնտրել գրական լեզվի զարգացման ու «վերելքի» համար: Ըստ բանաստեղծի՝ գրականության զարգացումը պայմանավորված է ոչ միայն համամարդկային գաղափարների ու հույզերի արտացոլմամբ, այլեւ բարձր մշակման հասած գրական լեզվով:

Տերյանի զեկուցումներից ու նամակներից պարզ է դառնում, որ բանաստեղծն ունեցել է գեղարվեստական գրականության ու մշակույթի զարգացման գործում ազգային լեզվի նշանակության խոր եւ հստակ ըմբռնում: Նա ազգային լեզվի դերն ու նրա մշակման ուղին համարել է գրականության զարգացման բոլոր գործոններից ամենակարեւորը, քանի որ լեզուն ազգային մշակույթի ամենազորեղ գործոնն է: «Կուլտուրականության առաջին պայմանը զարգացած, հարուստ եւ ճկուն լեզուն է: Շքեղ շենքերը, պալատներն ու տաճարները այնքան ցայտուն կերպով չեն ցոլացնում ժողովրդի կուլտուրան, որքան լեզուն»,– գրում է բանաստեղծը *(Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1961, էջ 282)*: Նա համոզված է, որ «լեզուն ժողովրդի հոգու, բնավորության արտահայտիչն է», նաեւ՝ «լեզուն կուլտուրայի ամենազորեղ մղիչն է, մարդու ամենահավատարիմ ու անդավաճան մխիթարիչն ու սփոփիչը անխոս բնության, անբարբառ տիեզերքի առջեւ» *(էջ 381)*:

Որոշակի տարբերակում մտցնելով գրական լեզու, գեղարվեստական գրականության լեզու, գիտության լեզու, բարբառ եւ այլ անվանումների ու հասկացությունների միջեւ՝ բանաստեղծը տարորոշում է հայ գեղարվեստական գրականության արեւելյան ճյուղի լեզվական մշակույթի երկու հիմնական ուղղությունները. «Մյուս կողմից մեր ռուսահայ կամ արեւելյան լեզուն առաջ է գնացել երկու շավղով, երկու ճյուղավորությամբ՝ մի կողմից դա այն լեզուն է, որ դարձել է մեր մամուլի այժմյան լեզուն, այլ խոսքով՝ մեր գրական լեզուն, մյուս կողմից՝ այն լեզուն, որ գործածել են Աբովյանը եւ հետո Պռոշյանը, Աղայանը եւ Թումանյանը» *(էջ 284)*:

Ա. Ծատուրյանի մասին գրած հոդվածում եւս Տերյանը խոսում է լեզվամշակման այդ երկու հակադիր ուղղությունների մասին՝ այս դեպքում ոչ թե լեզուն, այլ գեղարվեստական գրականությունը նկատի ունենալով. «Մեր գրականությունը առաջ է գնացել երկու ուղղությամբ՝ Աբովյան–Պռոշյան–Աղայան–Թումանյան–Իսահակյան եւ Նազարյան–Նալբանդյան–Շահազիզ–Պատկանյան–Ծատուրյան: Մեկի մեջ իշխում է ժողովրդական ոգին, մյուսը ստեղծում է մեր գրական լեզուն ընտրած մի միջին ճանապարհ գրաբարի ու ժողովրդական բարբառների միջեւ» *(էջ 239)*: Բանաստեղծն իրավացիորեն նկատում է, որ այդ երկու ճյուղավորումներից մեկով ընթացել է մամուլի եւ գրագրության լեզուն, իսկ մյուսով՝ գլխավորապես գեղարվեստական ստեղծագործությունների լեզուն: Իսկ լեզվի երկփեղկման պատճառ Տերյանը համարել է այն, որ մեր գրողները երբեմն հակում են ցուցաբերել դեպի գրաբարը կամ բարբառները: Ստեղծված իրավիճակը խոչընդոտել է հայ գրական լեզվի կանոնավորումն ու զարգացումը:



Մինչեւ 19-րդ դարի կեսերը հայ գրական լեզուն չի կիրառվել գեղարվեստական գրականության մեջ, քանի որ «չի ունեցել զարգացման կանոնավոր հուն»: 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ հայ նոր գրական լեզուն սկսել է զարգացում ապրել: Գրական լեզվի զարգացման գործում, ըստ Տերյանի, մղիչ գործոն եղել է ոչ թե գեղարվեստական գրականությունը, այլ գաղութահայ պարբերական մամուլն ու դպրոցները: Ահա թե ինչու է հայ մամուլի լեզուն բանաստեղծը համարում գրական լեզու՝ նրան հակադրելով լեզվական մշակույթի այն ուղղությունը, որը լիովին առնչվում էր գեղարվեստական գրականության ստեղծմանը: Դրա համար էլ գրական լեզվի ժողովրդայնացման ուղղությունը շեղում էր գրական լեզվի արհեստական ու հռետորական բնույթի դեմ:

Վահան Տերյանն անդրադառնում է հայ գրական լեզվի մշակման երկու ուղղությունների թերություններին ու արժանիքներին: Բարձր գնահատելով լեզվամշակման հակադիր ուղղության ներկայացուցիչներին՝ բանաստեղծը միաժամանակ անկեղծ, կիսամեռ եւ այլ որակումներ է տալիս լեզվական հյուսիսափայլյան ուղղությանը, որի ներկայացուցիչն էր համարում իրեն *(էջ 285)*: Այդ լեզվի մեջ հենց պատկերավորության պակասն էլ ամենայն հավանականությամբ չէր բավարարել Պռոշյանին, Աղայանին, Սունդուկյանին. «Եվ շատ հասկանալի է, որ Սունդուկյանի նման մի անզուգական տաղանդ պետք է նկատեր, որ դրամայի ասպարեզում, թատրոնում այդ Նազարյան-Շահազիզյան լեզուն անկիրառելի է, անթույլատրելի, անհնար: Որովհետեւ ոչ մի տեղ այնքան աչքի չի ընկնում լեզվի մեռածությունը, որքան թատրոնում եւ այն կենցաղագրական-նատուրալիստական թատրոնում: Մյուս կողմից նույնը պիտի զգար եւ Աղայանը, եւ Պռոշյանը ժողովրդական կենդանի կենցաղին մոտենալիս» *(էջ 285)*:

Շարունակությունը՝ էջ 6

Լեզվի հարցերը Տերյանի հոդվածներում եւ նամակներում

Սկիզբը՝ էջ 5

Նոր գրական լեզվին նման որակումներ տալիս էր նաեւ Թումանյանը. «Էս լեզուն աղքատ, չոր ու ցամաք բառերի մի տերողորմյա է, անոճ ու անկենդան» *(Հ. Թումանյան, հ. 4, Ե., 1951, էջ 142)*: Եթե գրական լեզվի գնահատման հարցում Տերյանի ու Թումանյանի կարծիքները համընկնում էին, ապա գրողների կարծիքները՝ գրական լեզվի զարգացման հեռանկարների վերաբերյալ, տարբերվում էին: Ի տարբերություն Թումանյանի՝ Տերյանը համոզված էր, որ լեզվամշակման Աբովյան–Պռոշյան–Սունդուկյան–Թումանյան ուղղությունը, որքան էլ պատկերավոր լիներ, չէր կարող հաղթել Նազարյան–Շահազիզ–Հովհաննիսյան–Ծատուրյան ուղղությանը: Պատմական զարգացման հետեւանքով հայ նոր գրական լեզու էր դարձել ոչ թե «կենդանի ու բնական», այլ «արվեստական», «անկենդան ու շինծու» լեզուն:

Գաղութային, անկենդան լեզվի հաղթանակի գլխավոր գործոնը պայմանավորված էր այդ լեզվի համընդհանուր ու հասկանալի լինելով: «Լեզուն զարգանում է ազատ եւ չի կամենում հպատակվել լեզվաբաններին պեղած հին օրենքներին եւ օրինակներին»,– գրում է Տերյանը *(Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 289)*: Բանաստեղծը հայ գրականության գալիք օրը պատկերացնում էր համամարդկային գաղափարներով ու հույզերով, «լայն ճանապարհի լեզվի» բարձրարվեստ գեղարվեստական մշակմամբ, որը պետք է նոր կյանք տար անկենդան լեզվին:

Տերյանը հայ գրականության գեղարվեստական վերելքի համար անհրաժեշտ երկու հանգամանք էր կարեւորում՝ «ազգային կճեպից» դուրս եկած, համամարդկային հույզեր ու գաղափարներ արտահայտող գրականություն եւ մշակված, զարգացած գրական լեզու: Պատմական յուրաքանչյուր դարաշրջան թելադրում է կյանքն արտացոլելու իր սկզբունքներն ու չափանիշները, ուստի նպաստավոր չէր ժամանակի ռուս եւ եվրոպական գրականության բուռն որոնումների տեսադաշտում հայացքն ուղղել նախորդ շրջանի «գավառական» կամ «կիսագյուղացիական» գրականությանը: Անհրաժեշտ էր հաղորդակից լինել աշխարհի բարձրարվեստ մշակույթներին եւ հայ գրականությունը դուրս բերել շրջագծված գրական ավանդույթների կաղապարներից, մոտեցնել ժամանակակից մարդուն ու մտածողությանը: Ինչպես նշում է 20-րդ դարի հայ գրական-քննադատական մտքի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը՝ Հ. Օշականը, Տերյանն «առանց ցոյցի շեղեցաւ մեծերին սիրելի աւանդութիւններէն» եւ «բարեշրջեց» արեւելահայ բանաստեղծության ընթացքը *(Յ. Օշական, Արեւելահայ դէմքեր, Պէյրութ, 1999, էջ 217)*:

Հայերենի ավանդական բառաշինության ու Մխիթարյանների կատարած գործի նկատմամբ Տերյանը դրսեւորում է քննադատական վերաբերմունք: Գրողն ընդգծում է «լեզվի եվրոպականացման» անհրաժեշտությունը, այսինքն՝ «եվրոպական բառերի» առատ մուտքը հայերեն, պետք է փոխառություններ կատարել տարբեր լեզուներից՝ «ստեղծագործական» լեզվի օգնությամբ յուրացնելով եւ ընդունելով դրանք: Այս առումով նա քննադատում է Մխիթարյանների գործունեությունը. «Նրանք օտար բառը թարգմանում են կամ տեղը մի նոր, ինչպես իրենք են ասում, ավելի հայաշունչ բառ են թխում: Վելոսիպեդին ասում են հեծանիվ, ինտելիգենցիային՝ մտավորականություն, սոցիոլոգիային՝ ընկերաբանություն, ֆիլոսոֆիային՝ իմաստասիրություն, պալտոյին՝ վերարկու, գալոշին՝ կրկնակոշիկ, փեչին՝ վառարան, տրամվային՝ էլեկտրաքարշ եւ այլն: Այդ ձեւը սխալ է ոչ միայն նրա համար, որ «տրամվայ» բառը «էլեկտրաքարշ» բառից եւ բարեհնչյուն է, եւ դյուրըմբռնելի, այլեւ գլխավորապես նրա համար, որ այդպիսի սխոլաստիկ ձեւով ստեղծվում է մի շարք անկենդան, շինծու, անհասկանալի բառերի ու դարձվածքների, որոնք մեր լեզուն դժվարացնում են, դարձնում ավելի դժվար յուրացվող մի լեզու...» *(Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 280)*: Սակայն նշված տեսակետը բանաստեղծը չկիրառեց իր ստեղծագործության մեջ: Դրա համար էլ Տերյանի խոսքարվեստը բառաշինության դասական օրինակ է, իսկ ոճական որոշակի արժեքով գործածվող նորաբանությունները գեղարվեստական խոսքի ու միջավայրի երանգավորման նպատակադրում ունեն:

Հայերենի զարգացման, պահպանման ճանապարհին Տերյանը լուրջ խոչընդոտ էր համարում հայ ժողովրդի մեջ խոր արմատներ գցած օտարախոսությունը: Բանաստեղծի մի շարք նամակներ վկայում են, որ նա մայրենիի պահպանումը համարում էր առօրյա գործելակերպ, լեզվի ամենօրյա բանավոր ու գրավոր գործածություն: Տերյանը բարոյական ու հասարակական աղետ է համարում ստեղծված այն վիճակը, երբ հայության մտավորականության զգալի մասը հայերեն չի խոսում: Եթե «Հայ գրականության գալիք օրը» զեկուցման մեջ կարելի է որոշակի հանդուրժողականություն գտնել օտարախոս հայ մտավորականության նկատմամբ, ապա «Հոգեւոր Հայաստանում» խստորեն քննադատվում է ազգային լեզվով չխոսող մտավորականությունը: Բանաստեղծը մերժում է օտարախոսության ամեն մի երեւույթ: Որոշ նամակներում Տերյանը ոչ բնականոն է համարում անգամ իր եւ ընկերների նամակագրությունը երբեմն հայերեն չվարելը, այլ դեպքերում խոսում է հայերեն չիմացող կանանց հայերեն սովորեցնելու մասին եւ այլն:

Ցոլակ Խանզադյանին հասցեագրված մի շարք նամակներում բանաստեղծը խիստ դժգոհություն է հայտնում, որ Խանզադյան ամուսիններն իրենց երեխայի հետ հայերեն չեն խոսում. «Ձեր փոքրիկ դստերը բարեւ կանես եւ կասես, որ Վահան քեռին դժգոհ է, որ նա հայերեն չի բլբլացնում...» *(Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 3, Եր., 1963, էջ 305)*:

Մեկ այլ նամակում, մտաբերելով Լազարյան ճեմարանի դաստիարակ Ալ. Ֆլինկի խոսքերը, գրում է. «Մտաբերում եմ սրիկա Ֆլինկի բառերը՝ «Խղճուկ ժողովուրդ եք, եւ ձեր լեզուն էլ խղճուկ է»: Ո՛չ, լեզուն խղճուկ չէ, բայց մենք համենայն դեպս, իսկապես խղճուկ ժողովուրդ ենք» *(էջ 452)*: Տերյանը, հայերենը համարելով ամենահարուստ լեզուներից մեկն աշխարհում, իր ազգակիցներից շատերին խղճուկ էր համարում այդ պարգեւի արժեքը չհասկանալու համար:

Տերյանի կյանքից հայտնի են նաեւ ուրիշ դրվագներ, երբ նա բարոյական անկում է համարում ազգային լեզուն չկիրառելը: Հիշենք նաեւ այն հայտնի դեպքը, որ առիթ դարձավ «Չեմ դավաճանի իմ Նվարդին» ութնյակի գրությանը, ուր Արայի կնոջ՝ Նվարդի կերպարը խորհրդանշում է հայոց լեզուն:

Այսպիսին են եղել Վահան Տերյանի տեսակետները հայոց լեզվի դերի, նշանակության ու զարգացման հեռանկարների մասին, այն, ինչ էական է եղել բանաստեղծի համար, քանի որ, ինչպես փաստում է նա, լեզուն ազգի լինելության միակ գրավականն է, «լեզուն ազգի հոգին է. կենդանի է այդ հոգին, կենդանի է եւ ազգը. կենսունակ է առաջինը, ուրեմն կենսունակ է եւ երկրորդը» *(էջ 290)*:

Մերի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՄԱՀՎԱՆ ՖՈՒԳԱ



Սկիզբը՝ էջ 4

Մարկեսն իր կյանքի ընթացքում տեսավ Կարիբյան ավազանի երկրների բազմաթիվ բռնապետերի, տեսավ նրանց իշխանության գալու եւ նրանց անկման հաջորդական տարբերակները եւ ընդհանրացրեց այդ ամենն իր բռնապետի կերպարում:

Որպես վեպի հերոսի հիմնական նախատիպ՝ ուսումնասիրողները տալիս են Վենեսուելայի նախագահ Խուան Վիսենտե Գոմեսի անունը: Հիշում են նաեւ Կուբայի, Մեքսիկայի, Պարագվայի ղեկավարներին (Խերարդո Մաչադո, Ֆուլխենսիո Բատիստա, Պրոֆիրիո Դիաս, Գասպար Ֆրանսիա եւ ուրիշներ): Սա կերպավորման միանգամայն նոր սկզբունք է, որտեղ անանունը դառնում է անձնանուն, տարածությունը՝ որոշակի երկիր:

Վեպը ոչ միայն պատմաաշխարհագրական հղացքի արգասիք է, այլեւ արդյունք երաժշտական ճշգրիտ զգացողության, որ վերածվում է ինքնակրկնվող, ինքնաբացվող, ինքնադարձ ու առաջընթաց ֆուգայի, այս դեպքում՝ մահվան ֆուգայի: Իսկ որպես գեղարվեստական ստեղծագործության նախօրինակ՝ կարող ենք հիշատակել Պաուլ Ցելանի «Մահվան ֆուգա» բանաստեղծությունը: Այդ մտածողությամբ Մարկեսը հյուսել է մեռնող տերեւներով ծածկվող նահապետի աշնան մահվան ֆուգան:

Սկզբից մինչեւ վերջ նույն կշռույթն է՝ մեծ ջրերի մակընթացության ու տեղատվության նույն շարժումով: Այս շարժման մեջ են տարուբերվում գեներալի մահվան ու նախամահվան շրջառույթները: Հենց սա էլ դառնում է արձակ պատումի բանաստեղծական պարբերույթ եւ վերածվում երաժշտական ֆուգայի:

Ավելի դիպուկ բնորոշմամբ՝ Բեթհովենի «Ֆուգան» է՝ այս դեպքում՝ բառերի երաժշտությամբ: Հիմնական ասելիքի պարբերական կրկնություն ու զարգացում՝ բարդ ու բազմաբարդ նախադասությունների, համադասությունների ու ստորադասությունների, բառային տարբեր կապակցությունների ալիքվող հորձանքով:

Այստեղ վայրի, հզոր ու նախնական մի ուժ կա ամեն ինչի մեջ, որն այլ բան չէ, քան կենսաբանական բնազդը: Մի ազդակ, որ գալիս է որսին հետապնդող գիշատիչ գազանների վազքից ու ոռնոցից, դեպի օվկիանոսներ հոսող անսահման ջրերի տարերքից, անանցանելի ջունգլիներից, թռչունների վառ գույներից:

Այդպես՝ Մարկեսի կերպարները հզոր են, իրենց բնութագրական հատկանիշերով շատ խիտ ու թանձր, որ բացվում ներկայանում են կենսական լիցքերի հաջորդական պայթյունների շառաչով: Ոչինչ չի պարզվում, որովհետեւ նրանցն ամբողջական շղթա է՝ հերոսին տեսնում ես ընթացիկ գործողության մեջ, հետո մի տեղ ծնունդն է, իսկ վերջում՝ մահը: Ամբողջ կյանքի ընթացքում նրանց ուղեկցում են ստեղծման երջանկությունն ու կործանման տագնապը: Սերունդներ են գալիս ու գնում, որ ասես փախչում են մահվան հետապնդումից: Նրանց ուժը մահվան դեմ ուղղված զորավոր բնազդն է, որ արտահայտվում է սիրով ու զուգավորման տարփանքով, գիտությամբ ու իմացությամբ, պատերազմներով ու իշխանությամբ, ծնունդով ու մահով: Դրանց կենսագործունեությամբ այդ կերպարները լիարժեք են, իրենց տեղերում անհրաժեշտ ու անփոխարինելի, առինքնող ու հիշվող:

Իր պատմությունների ու հերոսների արարքների հանդեպ Մարկեսը վերականգնեց զարմանքի զգացողությունը, այն, ինչով երեխան ոգեւորվում է կրկեսում՝ վա՛յ, կրակ կուլ տվեց, մեծը՝ հերթական հանրահավաքից ու հեղափոխությունից հետո՝ ի՞նչ լավ է, նոր կյանք ենք սկսում: Այստեղ եւ հրաշքն է, եւ աճպարարությունը, եւ թամաշան, եւ թատրոնը (բեմարք, բեմադրություն, խաղ): Զարմանք են գրական հերոսի վերածված մարդիկ՝ նրանց հետաքրքրությունները, նախասիրություններն ու կենցաղը, զարմանք է նկարագրվող բնությունը՝ բուսական ու կենդանական աշխարհով, տեղանքով ու տարածությամբ, զարմանալի են կյանքի պատմությունները՝ վերածված հիմնական եւ ուղեկից դիպաշարերի, որ մե՛կ առասպել են, մե՛կ՝ ավանդապատում: Ընթերցողը կլանվում է այդ ամենով, ոգեւորվում, տարվում, եւ կարդալը՝ 21-րդ դարում գիրք կարդալը, դառնում է հաճույք: Կրկնում եմ՝ 21-րդ դարում, սա 19-րդ դարը չէ, երբ գրական հերոսները, ավելի հաճախ հերոսուհիները գործողության մեջ էին մտնում գիրքը ձեռքին: Սա 21-րդ դարն է՝ համացանցի համաշխարհային տարածքով, սա լրատվության ու տեղեկատվության սարդոստայնն է, սա կյանքի ազատ կազմակերպման անսպառ հնարավորությունների լայն ասպարեզն է, մեծ արագությունների, տեղաշարժերի ու միջմոլորակային թռիչքների ժամանակը: Այս պայմաններում, ժամանակակի՛ց մարդ, դե՛, գիրքը ձեռքդ վերցրու եւ մեկուսացիր: Ահա այս պայմաններում Մարկեսը վերականգնեց ընթերցանության այն թանկ հաճույքը, որով առաջին հավատացյալներն Աստվածաշունչ էին կարդում:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Սկիզբը՝ էջ 3, 4

Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության եկեղեցական տոնակատարությունն սկսվում է հունվարի 5-ի երեկոյան՝ Ճրագալույցի («Ճրագ»՝ «մոմ», եւ «լուցանել»՝ «վառել» բառերից) սուրբ Պատարագով: Ճրագալույցին նախորդում է պահեցողության եւ ապաշխարության յոթնօրյա շրջանը:

Հունվարի 6-ին՝ Սուրբ Ծննդյան Պատարագից հետո, կատարվում է ջրօրհնեքի արարողություն, որը խորհրդանշում է Հիսուս Քրիստոսի մկրտությունը Հորդանան գետում: Հատուկ աղոթքներով ու շարականների երգեցողությամբ ջուրն օրհնվում է սուրբ խաչով եւ սրբագործվում սրբալույս մյուռոնով: Երբ սուրբ խաչը ջուրն է իջեցվում, Տիրոջից խոնարհաբար հայցում ենք, որ ինչպես այն ժամանակ Հորդանանում, այնպես եւ այժմ Սուրբ Հոգին իջնի, սրբի ջուրը՝ այն ընդունակ դարձնելով մեղքերը մաքրելու, լվանալու, հիվանդներին բժշկելու: Օրհնված ջուրը բաժանվում է հանվատացյալներին: Սուրբ Ծննդյան Պատարագից հետո պահքը լուծվում է, ու սկսվում է ուտիքի եւ տոնակատարության շրջանը, որը տեւում է մինչեւ հունվարի 13-ը:

Ահա եւ Սուրբ Ծննդյան ու Աստվածհայտնության խորհրդով է սկսվում նոր տարին՝ իր հետ բերելով նոր հույսեր, նոր խոհեր, նոր երազանքներ, նոր սպասումներ ու եռանդ: Հրաժեշտ ենք տալիս անցած տարվան, որ գլորվում է հավերժի գիրկը՝ իր հետ տանելով ցավն ու հիասթափությունը, անհանգստությունն ու տագնապը, դառնությունն ու կարոտը... Եվ հանկարծ զարմանքով գիտակցում ենք, որ մարդկային կյանքի արժեքն ապրված տարիների քանակի մեջ չէ, այլ՝ հոգեւոր, իմացական հասունության ու բարոյական կատարելության մեջ...

Էականը ոչ թե ժամանակի, այլ մարդու եւ նրա կյանքի որակի փոփոխությունն է՝ հավերժական ժամանակի մեջ. *«Ամենայն կեանք մեր անկայուն եւ շարժական է եւ ոչ մնացական: Ո՛չ մեծութիւն, ո՛չ փառք, ո՛չ ուրախութիւն, ո՛չ հեշտութիւն եւ ո՛չ այլ ինչ, այլ ամենայն ինչ փոփոխի եւ գնայ որպէս հին տարին գնայ...»* (ս. Գրիգոր Տաթեւացի):

Եվ ահա ժամանակի հավիտենական պտույտն անիմաստ կլիներ, եթե մարդկային կյանքը չիմաստավորվեր մեծ ու սքանչելի խորհրդով, այն է՝ արդարության Արեգակը՝ Հիսուս Քրիստոս, իբրեւ մարդու Որդի աշխարհ եկավ, որ մենք՝ մեղանչական արարածներս, ծնվենք որպես Աստծո որդիներ:

Սուրբ Ծննդյան խորհուրդն աղոթքի նման է տարածվում աշխարհի վրա՝ սփռելով լույս, խաղաղություն, անդորր: Իսկ Սուրբ Ծննդյան արեւածագը հույսի ու նորոգման վաղորդյանն է, երբ մեր հոգնած եւ տկարացած հոգիներն ուժ ու եռանդ են ստանում աստվածային անշեջ լույսից՝ նոր տարի մուտք գործելով բեթղեհեմյան պայծառ աստղի առաջնորդությամբ:

Հույս է ճառագում երկինքը, իսկ *«հույսը երբեք չի ամաչեցնում»* (հմմտ. Հռոմ. Ե 5): Հավատի լույսով եւ փրկության հույսով բացվում է երկինքը, ու ծագում է Արեգակը խաղաղության, եւ մենք՝ հավատացյալներս, ծնկած հովիվների կողքին ասես լսում ենք հրեշտակների երգը: Եվ հավատում ենք, որ մեր կյանքի *«գիշերն անցավ, եւ ցերեկը մոտեցավ»* (հմմտ. ԺԳ 12), քանզի՝ *«...Աստծու արքայությունն ուտելիք եւ ըմպելիք չէ, այլ՝ արդարություն եւ խաղաղություն եւ խնդություն Սուրբ Հոգով»* (Հռոմ. ԺԴ 17):

Արփինե ՉԱՆԹԻԿՅԱՆ

Անսահման տաղանդավոր ու անսահման հայրենասեր

Ռաֆայել Իսրայելյան —110

Սկիզբը՝ էջ 5

Իսրայելյանի վայելած հեղինակության, սիրո եւ հարգանքի հետ կապված ամենացնցող փաստը, սակայն, նրա լուսանկարի հայտնաբերումն էր բանտային խցերից մեկում՝ այն լուսանկարի օրինակներից, որը տեղ էր գտել 1974 թ. նրա ցուցահանդեսի կատալոգում: Արդյոք ո՞վ էր այդ բանտարկյալը, որի համար ճարտարապետն այդքան թանկ էր:

Ռաֆայել Իսրայելյանը մահկանացուն կնքեց 1973 թ. սեպտեմբերի 8-ին Երեւանում: Վազգեն Ա հայոց հայրապետի բնորոշմամբ՝ «Մեր ամբողջ ժողովուրդը, խոր ափսոսանքով, նրա մարմինը մասունքի նման տարավ հանձնելու հայրենի հողին»: «...Այսօր մենք, իբրեւ Հայոց Հայրապետ, խոնարհվում ենք, երախտագետ զգացումներով լեցուն, հանգուցյալ Ռաֆայել Իսրայելյանի հիշատակի առաջ, որին երբեք չենք մոռանալու: Նրան չի մոռանալու մեր ողջ ժողովուրդը: Նրան չեն մոռանալու Հայաստանի արեւը, Հայաստանի քարերը»,– ասել է Վեհափառը վարպետին նվիրված իր մահախոսականում:

Ռաֆայել Իսրայելյանի երկրային կյանքի վերջին օրերի մասին Վեհափառը գրել է. «...Ես նրան այցելեցի իր բնակարանում, նրա մահվանից 3-4 օր առաջ: Տեսա նրան հյուծված, համարյա սպառված վիճակում, լրիվ կմախքացած: Աշխատեցի հայտնի չանել իմ ցավը, ուրախ ժպիտով դիմեցի նրան, ինչպես միշտ: Խոսք բացեցի իր վերջին գործի մասին, այն նախագծի մասին, որ նա պատրաստել էր Երեւանի Ս. Հովհաննես եկեղեցու վերակառուցման համար՝ մեր խնդրանքով: Նա, այդ հիվանդ եւ ուժաքամ վիճակի մեջ, սքանչելի աշխատանք էր կատարել, երեւի իր կյանքի վերջին գործը: Նա տարածեց թղթերը, ցույց տվեց նախագծերը: Առույգացավ ու սկսեց խանդավառությամբ ներկայացնել եւ բացատրել իր կատարած աշխատանքը: Մենք զարմանում էինք հափշտակված, թե ինչպես այս մարդը, որ այնքան մոտիկ էր մահվան, բնավ չէր մտածում մահվան մասին, չէր խոսում հիվանդության մասին, նրա մեջ չկար ոչ մի հետք հոռետեսության եւ ոչ մի նշույլ՝ հուսահատության: Նա արհամարհում էր մահը, նա հաղթահարում էր մահը: Ներկայացնում էր իր նախագիծը այնպիսի կենսուրախությամբ, ինչպիսին պիտի ներկայացներ ինստիտուտը նոր ավարտած մի ուսանող, որ ներկայացնում է իր դիպլոմային աշխատանքը»:

Ռուբեն Զարյանը եւս հիշողություններ ունի վարպետի երկրային կյանքի վերջին օրերի մասին. «Վախճանվեց ուրբաթ գիշեր, լույս շաբաթ: Մի քանի օր արդեն վատ էր: Բակում ընկերների մի խումբ կար միշտ: Հասկանում էին, որ կորցնում են քաղաքացուն, ճարտարապետին, ընկերոջը: Ուրբաթ օրը, երեկոյան դեմ, արդեն ոչ մի ուժ չկար վրան: Սոֆիկը բարձրանում է երկրորդ հարկ ու ի՞նչ է տեսնում. Ռաֆոն ծնկներին մի մեծ գիրք է դրել, վրան թուղթ եւ գրում է՝

–Ռաֆո, էդ ի՞նչ ես անում:

–Գրում եմ:

–Ախր չի կարելի:

–Կարելի՛ է, կարելի՛:

–Իսկ ի՞նչ ես գրում:

–Մի քանի տող. ինչ գրվելու է Հաջընի հուշարձանի վրա:

Սոֆիկը մի փոքր հետո նորից է բարձրանում երկրորդ հարկ եւ գտնում Ռաֆոյին աչքերը փակ, ծանր շնչելիս: Կամացուկ մոտենում է եւ չի հասկանում քնա՞ծ է, թե ուժասպառ եղած: Հատակին ընկած էր թերթը, որի վրա կարմիր ֆլոմաստերով գրել էր, ջնջել, նորից գրել. «Կոթողս կանգնեցված է ի նշանավորումն սխրագործության անվեհեր հաջնեցի նախնիների, որոնք 1920 թվին իրենց կյանքի գնով տվեցին մեզ փրկություն՝ վերածնվելով հայրենի հողի վրա»:

Ռաֆոյի ձեռքով գրված վերջին տողերն են սրանք:

Նույնիսկ կյանքի վերջին ծանր ժամերին նա շարունակում էր ստեղծագործել, արարել, ծառայել իր պաշտելի ազգին, իր արվեստով փառաբանել ու անմահացնել նրա փառավոր ու հերոսական էջերը, քարոզել հայրենասիրություն ու ազգասիրություն:

Ռաֆայել Իսրայելյանի ճարտարապետությունը հնարավոր չէ ընդգրկել 20-րդ դարի Հայաստանում տիրապետող ճարտարապետական դպրոցներից ոչ մեկի մեջ, ինչպես նաեւ համարել այն ավելի վաղ ժամանակների որեւէ ոճի վերարթնացում: Նրա ստեղծագործությունների եւ ոճի ընդգծված ինքնատիպությունն ու ամբողջականությունը, համազգային ճանաչումը, ընդունումն ու սերը՝ թե՛ Հայաստանում, թե՛ արտերկրում (մեծ մասամբ հայահոծ համայնքներ ունեցող

երկրներում), ինչպես նաեւ նրա թողած նյութական եւ մտավոր ժառանգության վերլուծությունը հիմք են տալիս հայ ճարտարապետության մեջ առանձնացնելու նոր՝ իսրայելյանական դպրոց: Նշենք, որ այժմ ստեղծագործող ճարտարապետներից ոմանց նախագծած կառույցներում ակնհայտ են իսրայելյանական տարրերն եւ մոտեցումները:

Ցավով պետք է արձանագրենք, որ Իսրայելյանի ճարտարապետական կառույցները, որ մեծ թիվ են կազմում Հայաստանում եւ հայկական համայնքներ ունեցող որոշ երկրներում, բավարար ծավալով եւ մակարդակով ուսումնասիրված չեն:

2008-ից եռանդուն աշխատանքներ սկսվեցին Ռաֆայել Իսրայելյանին նվիրված կենսագրական կայքի ստեղծման ուղղությամբ. կայքի նպատակը վարպետի գործերի եւ մարդկայն տեսակի հանրահռչակումն է: Համացանցային ռեսուրսների կիրառումը՝ մասնավորապես անհատական կայքի եւ սոցիալական ամենատարածված ցանցում՝ «Ֆեյսբուք»-ում, էջի ստեղծումը մի քանի անգամ մեծացրեց Իսրայելյանի ժառանգության ճանաչումը, օգնեց անհատներին թեմայի վերաբերյալ նյութեր ստանալուն, որոնք հնարավոր չէր գտնել անձնական եւ պետական արխիվներից: Իսրայելյանի աշխատանքներն ընդգրկվեցին միջազգային «The Other Modern Architecture» ճարտարապետական էջում: Մենք եւս օգտվել ենք կենսագրական կայքից՝ այս ակնարկը գրելու ընթացքում:

Ցավոք, այսօր մեր քաղաքում չկա նրա հիշատակը հավերժացնող ոչ մի պատ, ոչ մի հուշաքար, էլ չենք ասում՝ վարպետին արժանի թանգարան, որտեղ հնարավորություն կլիներ ավելի լավ ծանոթանալու նրա արվեստին, գործին, կատարած ուսումնասիրություններին եւ մարդկային տեսակին:

Դիտում, ըմբոշխնում ենք Իսրայելյանի նախագծով կառուցված շինություններն ու կոթողները, ծանոթանում նրա ստեղծագործություններին ու գործունեությանը եւ ակամա հարց տալիս ինքդ քեզ. «Միայն վիթխարի տաղանդն ու պահանջկոտությունը սեփական անձի ու գործի նկատմամբ կբավականացնե՞ն այսպիսի հրաշք ստեղծագործություններ արարելու համար»: Եվ անմիջապես տալիս ես հարցիդ պատասխանը. «Անշուշտ՝ ո՛չ, նման շինություններ ու կոթողներ ստեղծելու համար միայն տաղանդը բավարար չէր լինի, պետք էր նաեւ հայրենասեր լինել, անսահման հայրենասեր, եթե ոչ՝ հայրենապաշտ, անսահմանորեն սիրել, պաշտել հայրենիքն ու ազգը, նրա անցյալն ու հոգեւոր նվաճումների ամբողջությունը:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ (ԱՐՄԵՆՅԱՆ)
Բանասիրական գիտ. թեկնածու

Սուրբծննդյան Պատարագ եւ միջոցառումներ Տավուշի թեմում

Տավուշի թեմում սուրբծննդյան միջոցառումներին իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան հատկապես թեմի «Լույս մանկանց» կիրակնօրյա դպրոցների սաները: Դեկտեմբերի 20-ին Տավուշի թեմի առաջնորդին հյուրընկալեցին սահմանամերձ Կոթի համայնքի սաները: Համայնքի մանկապարտեզում կազմակերպվեց Ոսկեպարի եւ տեղի կիրակնօրյա դպրոցների սուրբծննդյան միջոցառումը, իսկ դեկտեմբերի 21-ին սուրբծննդյան միջոցառում էին պատրաստել Գանձաքար համայնքի կիրակնօրյա դպրոցականները: Միջոցառման մասնակիցները հանդես եկան Քրիստոսի ծնունդը խորհրդանշող ներկայացումներով, երգերով, ասմունքով, երաժշտական տարբեր կատարումներով:

Դեկտեմբերի 22-ին իրենց անզուգական կատարումներով ներկաներին մեծ բավականություն պարգեւեցին Դիլիջանի կիրակնօրյայի սաները, որին հաջորդեցին մարզի Աչաջուր, սահմանամերձ Բերքաբեր եւ Ծաղկավան համայնքների դպրոցների միջոցառումները:

Տարեվերջյան շաբաթն իրենց հանդիսություններով եզրափակեցին Հաղարծին եւ Թեղուտ համայնքների սաները: Հաղարծնի մանկական կրթօջախում ներկաներին ողջունեցին մանկապարտեզի 73 եւ կիրակնօրյա դպրոցի 12 սաները: Ներկաները հուզված էին, երեխաները՝ ոգեւորված, որը կրկնապատկվեց սրբազանի այցով: Սպասված հյուրին պատշաճ դիմավորելու համար, պարզվեց, փոքրիկները երկար էին պատրաստվել: Հաղարծնի մանկապարտեզ է հաճախում 75, իսկ կիրակնօրյա դպրոց, որը, ի դեպ, թեմի մեծ դպրոցներից մեկն է, 163 սան: Միջոցառման սկզբում ներկաները միաձայն աղոթեցին, որին հետեւեցին երաժշտական կատարումներ, Աստվածաշնչից հատվածներ՝ Քրիստոսի ծննդյան վերաբերյալ: Հնչեցին երգեր, որոնք ավետում էին Քրիստոսի ծնունդը:

Միջոցառման ավարտին սաները ներկաներին նվիրեցին իրենց պատրաստած ձեռագործ բացիկները՝ Ձմեռ պապի եւ տոնածառի ինքնատիպ նկարազարդումներով: Դէ, թեմի առաջնորդն էլ, իր հերթին, դատարկաձեռն չէր հյուրընկալվել: Բոլոր սաներին, ինչպես եւ մյուս համայնքների միջոցառումների մասնակիցներին, փոքրիկ նվերներ հանձնվեցին:

«Դուք հրաշք եք, կրկնակի բացառիկ, քանզի կրելով Հաղարծնի վանական համալիրի անվանումը՝ շունչ եւ ոգի եք տալիս համալիրի ամեն մի քարի»,– իր խոսքում նշեց Բագրատ սրբազանը:

Հաջորդ այցը Հաղարծնի հարեւանությամբ տեղակայված Թեղուտ համայնքն էր: Այստեղ նորակառույց մանկապարտեզում դաստիարակվում է 43 սան, իսկ կիրակնօրյա դպրոց են հաճախում 31-ը, որը, ի դեպ, համայնքի բնակչության թվի համեմատությամբ բավականին մեծ ցուցանիշ է, ինչպես եւ՝ Հաղարծնում: Այստեղ եւս սաները հանդես եկան տարբեր կատարումներով, երգ ու պարով, բեմադրություններով, դուդուկի հիասքանչ կատարմամբ: Բագրատ սրբազանն օրհնեց ներկաներին, զրուցեց փոքրիկների հետ: Կրթօջախի տնօրեններն իրենց երախտիքի խոսքն ուղղեցին սրբազանին՝ շեշտելով, որ վերջին տարիներին համայնքի հոգեւոր կյանքն զգալի վերելք է ապրում, սերտացել են եկեղեցի-դպրոց-մանկապարտեզ հարաբերությունները, ամենուրեք թեւածում են սերը, հավատն ու համերաշխությունը:

* * *

Հունվարի 20-ին Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպս Գալստանյանը սահմանամերձ Ներքին Կարմիրաղբյուրում էր, որտեղ ամեն օր լույսը բացվում է թշնամու կրակոցի ձայնով եւ ավարտվում նույն կերպ: Սրբազանը նախ Սուրբծննդյան Պատարագ մատուցեց, ապա կատարեց Ջրօրհնյաց կարգ: Արարողությունը տեղի ունեցավ համայնքապետարանի հանդիսությունների սրահում: Սրբազան հորը սպասավորում էին Բերդի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Արամ քահանա Միրզոյանը, եկեղեցու հավատավոր սպասավոր Գագիկ Գրիգորյանը եւ սպասավորող մանուկներ:

Ջուրն օրհնվեց, եւ խաչքավոր ընտրվեց համայնքի վարչական ղեկավար Լեւոն Առաքելյանը:

Ներքին Կարմիրաղբյուր գյուղը Տավուշի մարզի ամենահին բնակավայրերից է, հիմնադրվել է 16-րդ դարում: Մայրաքաղաք Երեւանից հեռու է 192 կմ, հայ-ադրբեջանական սահմանից՝ 1.5 կմ, ընդ որում՝ թշնամու ամենամոտ դիրքից հեռու է ընդամենը 300 մ: Նախկինում գյուղն անվանվել է Վարդաշեն: Տեղի բնակիչների նախնիներն այստեղ են տեղափոխվել Արցախի տարածաշրջանից: Ունի հազարից ավելի բնակիչ, որոնք զբաղվում են անասնապահությամբ, այգեգործությամբ: Համայնքն ունի դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, ֆուտբոլային ակտիվ թիմ: 2012-ին կայացած ամառային օլիմպիական խաղերի ժամանակ Ռուսաստանի Դաշնության դրոշի ներքո հանդես եկած՝ ձյուդոյի օլիմպիական չեմպիոնն ազգությամբ հայ է, ծագումով՝ հենց այս համայնքից:

Ներքին Կարմիրաղբյուր գյուղը մշտապես գտնվել է ադրբեջանական զինուժի ուղիղ նշանառության տակ, առանձնատների մեծ մասը հրետակոծված է: Ներկայում համայնքի տղամարդկանց մեծ մասը ծառայում է ՀՀ ԶՈՒ-ում, պահպանում սեփական գյուղն ու ընտանիքը: Այստեղի յուրաքանչյուր բնակիչ սահմանապահ է՝ վստահ իր ուժերին, հավատով առ Աստված:

Պատարագին ներկա էին նաեւ սահմանապահ Մովսես գյուղի հոգեւոր հովիվը՝ Աբել քահանա, դպրոցի, մանկապարտեզի սաները, ծնողներ, ուսուցիչներ, համայնքի բնակիչներ:

Արարողության ավարտին թեմի առաջնորդը երեխաներին գիրք նվիրեց:

Ջրօրհնեքի կարգը սահմանամերձ համայնքում կատարելը, սրբազանի խոսքով, խորհրդանշական նշանակություն ունի, քանզի, լինելով սահմանին մոտ, համայնքի բնակիչն առավել կարիք ունի հոգեւոր սննդի եւ ուշադրության:

Մահ, թե՞ ազատություն

«Հայրենագիտությունը գլխավոր ուսմունք է այն անձանց համար, որոնք նվիրվում են հայրենիքին ծառայելուն»:

Հայ մեծանուն գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ Ռաֆֆին այս մտքերն արտահայտել է մի ժամանակաշրջանում, երբ երկիրը համեմատաբար խաղաղ կյանք էր ապրում: Ընդամենը՝ համեմատաբար, որին սակայն հաջորդելու էր հայ ժողովրդի պատմության ամենաարյունալի էջը՝ Մեծ եղեռնը, հայոց ջարդերը Ադրբեջանում, ղարաբաղյան շարժումն ու ազատամարտը: Շարժում, որը կարծես հայ ազգի դարավոր վշտի, ցավի պոռթկումն էր՝ այլեւս չհանդուրժելու հաստատակամ պահանջով եւ համարժեք ու հուժկու հակահարված տալու անկոտրում կամքով:

Ցավոք, այսօր պատկերը գրեթե չի փոխվել, եւ հայրենագիտությունն ուսմունք է դարձել արդեն յուրաքանչյուրիս համար, քանզի ճակատագրի հեգնանքով հայը մշտապես դատապարտված է պայքարելու իր գոյության համար: Կրկին իրավ է նկատում մեծանուն գրողը՝ ասելով. *«Հիմա աշխարհի կարգն այդպես է, եւ միշտ այդպես է եղել, ով որ զենք գործածել չգիտե, ով արյուն թափելու եւ մարդիկ կոտորելու ընդունակություն չունի, նրան ասում են՝ դու ազատ լինելու իրավունք չունես: Ուրեմն, եթե հայերը ցանկանում են ազատ լինել, պետք է ցույց տան, թե իրենք եւս զուրկ չեն քաջությունից, թե իրենք եւս սպանել գիտեն: Եվ այժմ ամենահարմար ժամանակն է»: Մեծ հայրենասերի խոսքերին ավելացնենք թերեւս երկու բառ՝ «այժմ եւ հավիտյան»:*

1988 թվական... Հակահայկական տրամադրություններ, Բաքվի, Սումգայիթի ջարդեր, որոնք կայծակնային արագությամբ հաջորդեցին մեկը մյուսին: Սկիզբ առավ ղարաբաղյան ազատագրական շարժումը: Էլ չենք խոսում կործանարար երկրաշարժի մասին, որը մի նոր՝ խոր վերք առաջացրեց հայի սրտում: Հայ ժողովրդի պատմությունը թեւակոխեց տագնապալի մի ժամանակաշրջան՝ լի հակասական իրադարձություններով: Մի կողմից՝ անկախություն, մյուս կողմից՝ պատերազմ, երկրաշարժ, տնտեսական ճգնաժամ: Հայ ժողովրդի տասնյակ, հարյուրավոր զավակներ, առանց վայրկյան իսկ վարանելու, նետվեցին մարտի՝ չխնայելով իրենց ունեցած ամենաթանկ բանը՝ կյանքը, հանուն ազգի ազատության, երկրի անկախության, հանուն ապրելու...

Ռաֆֆու եւ հայ մեծանուն մյուս հայրենասերների ոգով, խոսքով ու մտքերով դաստիարակված հայորդիներից էր Վազգեն Սպարապետը, որն ասաց. «Ամեն ժողովուրդ իր պատմության մեջ իր կռիվը գոնե մեկ անգամ մինչեւ վերջ պետք է տա»: Եվ տվեց... Այս սկզբունքով ու հայրենանվեր գաղափարներով տոգորված՝ նա առաջնորդեց ազատագրական պայքարը՝ այդ ոգով ներշնչելով նաեւ ազատամարտի մասնակիցներին: Նա առաջիններից էր, ով կռվի առաջին իսկ օրերից պայքարի, արյունալի մարտերի կիզակետում էր: Եվ ունեցանք այն, ինչ ունենք այսօր՝ ազատ, անկախ պետություն, հաղթանակած հայ ժողովուրդ, ուժեղ եւ մարտունակ հայոց բանակ: Ասել է թե՝ ունեցանք ազատություն՝ մահվան գնով, կյանք՝ արյան գնով: Մենք ապացուցեցինք մեր հողում ազատ ապրելու իրավունքը, եւ որ ամենակարեւորը՝ թշնամին հասկացավ, որ օրհասական պահին հայը մարտունակ է, կամքը՝ անկոտրում, ուժը՝ անսասան, եւ եթե հայի ձեռքին ձեռք կա, ապա սրտում՝ հավատքն առ Աստված:

Թեժ մարտերը դադարեցին, սակայն պատերազմը՝ ոչ: Ստեղծվեց կանոնավոր բանակ, որն արդեն քսանյոթ տարեկան է: Եվ կրկին հիշենք Վազգեն Սպարապետի խոսքերը. «Բանակը եղել է եւ պետք է լինի պետության, հասարակության, ողջ հայության հոգսը: Բանակաշինությունը ծանր, հավատացնում եմ, հաճելի հոգս է: Բանակն ազգի ինքնաճանաչման հայելին է, բոլոր հայերի ծնունդն է, հայության հավաքական կերպարն է, նրա պատասխանատվությունը, նրա պատմության վերագնահատումը եւ հայացքը ապագային: Սիրուն խոսքեր չեմ ասում, ընդամենը ճշմարտությունն եմ ասում:

Մեր բանակը ինքնակրթությամբ ստեղծված բանակ է: Մենք չէինք կարող սպասել, որ հեռուներից գեներալները գային եւ մեզ կռվել սովորեցնեին: Մենք մեր հովվի, արհեստավորի, բանաստեղծի միջից հանեցինք պաշտպանության նախարարին, գեներալին, զինվորին ու կռվեցինք: Փառք Աստծո, վատ չկռվեցինք»:

Ծնունդդ շնորհավոր, Հայրո՛ց բանակ...

ԱՆՈՒՇ ԱՂԱՍԱՐՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝ krishayas.wordpress.com
Ստորագրված է տպագրության 1.02.2019 թ.
Տպաքանակը՝ 1175